

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
« ԿԱՊԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ »
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍՅՈՒՆԻՔԻ ԱՎԱԶԱԿՈՂՃԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ԵՐԵՎԱԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
2025-2028ԹԹ. ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Տնօրեն՝

Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	3
1. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ	7
2. ՆԱԽԱՁԵՌՆՈՂԻ ԱՆՈՒՆԸ (ԱՆՎԱՆՈՒՄԸ) ԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ (ԳՏՆՎԵԼՈՒ) ՎԱՅՐԸ	12
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	12
4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	12
4.1. Նախատեսվող գործունեության վայրը	12
4.2. Նախատեսվող գործունեության բնութագիրը	18
4.3. Երկրաձևաբանություն, լանջերի թեքություն	32
4.4. Սեյսմիկ կառուցվածք, արտածին երկրաբանական երևույթներ	35
4.5. Կլիմայական պայմաններ	38
4.6. Մթնոլորտային օդ	45
4.7. Ջրային ռեսուրսներ	47
4.8. Հողային ծածկույթ	52
4.9. Կենսաբազմազանություն	57
4.10. Բնության հատուկ պահպանվող տարածքներ	62
4.11. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ	65
4.12. Ազդակիր համայնքը	66
4.13. Այլընտրանքային տարբերակներ	72
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ	73
6. ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՈՐԾՈՆՆԵՐԸ, ՌԻՍԿԵՐԸ	86
7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ	85
8. ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ	90
9. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ	93
10. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ	97
11. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	99
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	101
Հավելված 1. Հանրային լսման արձանագրությունը, ավագանու որոշումը ...	102

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են.

Երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել կամ վերագնահատել օգտակար հանածոների պաշարները.

Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն՝ թույլտվություն, որն իրավունք է տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնելու երկրաբանական ուսումնասիրություններ օգտակար հանածոների հայտնաբերման, հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարների վերագնահատման համար.

Նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում.

Նախագծային փաստաթուղթ՝ նախատեսվող գործունեության իրականացման համար օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված փաստաթուղթ կամ փաստաթղթերի փաթեթ և դրանց փոփոխություն: Նախատեսվող գործունեության իրականացման համար օրենքով կամ այլ իրավական ակտերով փաստաթուղթ կամ փաստաթղթերի փաթեթ նախատեսված չլինելու դեպքում՝ նախատեսվող գործունեության փուլային նկարագիր, ընդերքօգտագործման դեպքում՝ Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 36-րդ և 39-րդ հոդվածներով սահմանված ծրագիր կամ 50-րդ հոդվածով սահմանված արդյունահանման նախագիծ.

Շրջակա միջավայր՝ բնական և մարդածին բաղադրիչների (մթնոլորտային օդ, կլիմա, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ կամ բնապահպանական հողեր, բնակավայրերի կանաչ գոտիներ, կառույցներ, բնական օբյեկտներ, պատմության և

մշակույթի հուշարձաններ), սոցիալական միջավայրի, ներառյալ մարդու առողջության, անվտանգության.

Շրջակա միջավայրի վրա ազդեցություն՝ հիմնադրությային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի կամ դրա բաղադրիչներից որևէ մեկի փոփոխությունը.

Նախատեսվող գործունեություն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում նշված գործունեության տեսակներ, 6-րդ և 7-րդ մասերով սահմանված գործունեություն, իսկ սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կարգով նախատեսված դեպքերում՝ նաև դրանց վերակառուցում կամ ընդլայնում կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինում կամ վերապրոֆիլավորում կամ կոնսերվացում կամ տեղափոխում կամ դադարեցում կամ փակում, ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտների դեպքում՝ շահագործումից հանում (ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտ հանդիսացող գերեզմանոցի դեպքում՝ փակում) կամ քանդում կամ նախագծային փոփոխություն.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում՝ նախաձեռնողի կողմից նախատեսվող գործունեության հետևանքով շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ուսումնասիրության գործընթաց.

Նախաձեռնող՝ հիմնադրությային փաստաթղթի նախագիծ ներկայացնող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ նախատեսվող գործունեություն իրականացնելու համար դիմող անձ.

Ազդակիր բնակավայր՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հնարավոր ազդեցության ենթակա բնակավայր (Երևան քաղաքի դեպքում՝ վարչական շրջան).

Ազդակիր համայնք՝ ազդակիր բնակավայր ներառող համայնք.

Շահագրգիռ անձ կամ հանրություն՝ հիմնադրությային գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով անմիջական կամ հավանական ազդեցություն կրող կամ դրանց վերաբերյալ ընդունվող որոշումների նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող մեկ կամ մեկից ավելի ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

Բնապահպանական կառավարման պլան՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման, բացասական ազդեցությունների կանխարգելման, բացառման, նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և շրջակա միջավայրին հասցվող վնասի հատուցման համար նախատեսվող միջոցառումները (շինարարության, շահագործման, փակման, հետփակման փուլերը, ռիսկային և արտակարգ իրավիճակները), դրանց ընտրության և արդյունավետության հիմնավորումը, իրականացման ժամանակացույցը, մշտադիտարկման ցուցիչները, ծախսերի գումարային գնահատումը նախատեսող փաստաթուղթ.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկման (մոնիտորինգի) ծրագիր՝ հիմնադրույթային փաստաթղթի դրույթների գործողության կամ նախատեսվող գործունեության՝ նախագծային փաստաթղթին համապատասխան իրականացման ընթացքում և դրանից հետո շրջակա միջավայրի վրա ներգործության դիտարկմանը, հետնախագծային վերլուծությանը, պետական փորձաքննական եզրակացության և Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարմանը կամ արտադրական հսկմանը (ինքնահսկմանը) ուղղված գործողությունների ամբողջություն.

Բույսերի կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին.

Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացող կենդանական տեսակների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին: Կենդանիների Կարմիր գիրքը վարվում է հազվագյուտ և անհետացող կենդանական տեսակների և համակեցությունների հաշվառման, պահպանության, վերարտադրության, օգտագործման և գիտականորեն հիմնավորված

հատուկ միջոցառումների մշակման և իրագործման, ինչպես նաև դրանց մասին բնակչությանը իրազեկելու նպատակով.

Հող՝ երկրի մակերևութում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

1. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Սյունիքի ԱԿԽ երևակման տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

– ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

– ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

– «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

– «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

– «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-121 (ընդ. 1994թ. և լրամշակված՝ 2022թ.), որով կարգավորվում է մթնոլորտային օդի պահպանության

իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

– «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

– «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է ՀՕ-110, 21.06.2014թ., խմբագրվել է 03.05.23 ՀՕ-150-Ն), կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լսումների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության և նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:

– «Թափոնների մասին» 24.11.2004թ.-ի թիվ ՀՕ-159-Ն օրենք, որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

– ՀՀ կառավարության 19.11.2014թ.-ի թիվ 1325-Ն որոշում, որով սահմանվել է հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը:

– ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման,

հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

– ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

– ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:

– ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:

– ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,

– ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,

– ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը:

– ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N675-Ն որոշում, սահմանվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների բովանդակությունը, ինչպես նաև ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման միջոցառումները:

- ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը:
- ՀՀ կառավարության 17.07.2017թ.-ի N990-Ն որոշում, որով սահմանվել են ֆինանսական երաշխիքի բովանդակությունը և դրան ներկայացվող չափորոշիչները, դրանց ներկայացվող որակական չափանիշների գնահատման, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի հաշվարկման կարգը:
- ՀՀ կառավարության 18.08.2021թ.-ի N1352-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված ռեկուլտիվացիոն աշխատանքների՝ նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:
- ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի N1396-Ն որոշում, որով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում հողի բերրի շերտի նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ.-ի N138 հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում աղմուկի սանիտարական նորմերը:
- ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի N64-Ն որոշում, որով հաստատվել են ջրակոռոնառակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները:
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 12.06.2025թ.-ի N228-Ն հրաման, որով խմբագրվել են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցները:

- ՀՀ կառավարության 11.11.2021թ.-ի N1848-Ն որոշում, որով հաստատել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի, ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման, այդ թվում՝ կենսաբանական վերականգնման ուղեցույցը:
- ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006թ.-ի N342-Ն հրաման, որով հաստատվել է Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը:
- ՀՀ կառավարության 27.05.2015թ.-ի N764-Ն որոշումը, որով հաստատվել է շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը:
- ՀՀ կառավարության 25.09.2014թ.-ի N 1059-Ա որոշում, որով հաստատվել են ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը (համաձայն N 1 հավելվածի) և Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման բնագավառի 2014-2020 թվականների պետական ծրագրի միջոցառումները՝ (համաձայն N 2 հավելվածի):
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 25.10.2022թ.-ի N°369-Ն հրաման, որով հաստատվել են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցները:

2. ՆԱԽԱԶԵՌՆՈՂԻ ԱՆՈՒՆԸ (ԱՆՎԱՆՈՒՄԸ) ԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ (ԳՏՆՎԵԼՈՒ) ՎԱՅՐԸ

Գործունեության նախաձեռնողը «ԿԱՊԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ» ՍՊ ընկերությունն է: Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում ընկերության գրանցման համարն է 27.110.01485, գրանցման ամսաթիվը՝ 15.10.2007թ., գտնվելու վայրը՝ Հայաստան, ՍՅՈՒՆԻՔ, ԿԱՊԱՆ, Գործարանային, Շ 53, 3302:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

«ԿԱՊԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ» ՍՊ ընկերությունը նախատեսում է իրականացնել ՀՀ Սյունիքի մարզի Սյունիքի ԱԿԽ երևակման երկրաբանական ուսումնասիրություն, ինչը համապատասխանում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի ա. ենթակետին՝ երկրաբանական ուսումնասիրություններ:

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

4.1. Նախատեսվող գործունեության վայրը

Աշխատանքների համար ընտրված տարածքը վարչական տեսակետից ներառված է Կապան խոշորացված համայնքի Սյունիք բնակավայրի սահմաններում: Հայցվող 2.11հա տարածքի կոորդինատները ներկայացվում են ստորև (ըստ Arm WGS-84 կոորդինատային համակարգի).

Հ/Հ	Կոորդինատները	
	X	Y
1	4341099.0196	8628081.1999
2	4341167.0800	8628107.0600
3	4341139.4300	8628161.0500
4	4341124.1100	8628195.5000
5	4341114.6800	8628259.7200
6	4341113.4300	8628274.7900
7	4341082.1000	8628281.0000
8	4341013.3000	8628286.6000

Հ/Հ	Կոորդինատները	
	X	Y
9	4340975.3800	8628287.9000
10	4341007.7700	8628201.3000
11	4341021.5500	8628160.2500
12	4341038.2400	8628142.5900
13	4341053.3500	8628150.1700
14	4341080.9200	8628123.5800
15	4341075.4700	8628109.9300
1	4341099.0196	8628081.1999

Ազդակիր Սյունիք բնակավայրի մոտակա բնակելի շինությունները գտնվում են հայցվող տարածքից 1140մ, Սգնակ բնակավայրի շինությունները՝ 950մ, Դիցմայրի բնակավայրի շինությունները՝ 1540մ հեռավորությունների վրա:

Մոտ 400մ հեռավորության վրա անցնում է Կապան-Կովսական ճանապարհը և դրանից դեպի Սգնակ բնակավայր գնացող S-8-75 տեղական նշանակության ավտոճանապարհը, մոտ 1090մ հեռավորության վրա՝ դեպի Դիցմայրի բնակավայր գնացող տեղական նշանակության ճանապարհը:

Մոտ 670մ հյուսիս-արևմտուտք գտնվում է «Մարիլա» ՍՊԸ գյուղ.արտադրական համալիրը, մոտ 400մ հյուսիս գործում է մետաղամշակման արտադրամաս, մոտ 30մ հյուսիս՝ ավազակոպճային խառնուրդի ջարդիչ-տեսակավորող արտադրամաս:

Հայցվող տարածքի հարավ-հարավ-արևմտյան հատվածում, 10-33մ հեռավորության վրա գտնվում է «Կապանի ՃՇՇ» ՍՊԸ պատկանող շինարությունը և արհեստական ավազանները:

Երևակման արևելյան հատվածում են գտնվում թփուտներ, հարավային հատվածում՝ բազմամյա տնկարկներ, շրջանի հողատարածքները ներկայացված են հիմնականում գյուղ.նպատակային նշանակության հողերով:

Երևակման տարածքի իրավիճակային հատակագծերը ներկայացված են նկարներ 1-5-ում:

Տարածքի խոշոր բնակավայրը Սյունիքի մարզկենտրոն Կապան սահմանամերձ քաղաքն է, որը մոտակա շինությունները գտնվում են հայցվող տեղամասից մոտ 2.3կմ հեռավորության վրա: Մոտ 2.15կմ հեռավորության վրա է գտնվում Կապանի օդանավակայանը:

Սյունիքի երևակման հարակից տարածքում, հայցվող տեղամասից մոտ 2.4կմ հեռավորության վրա ներկայումս շահագործվում է Ողջիի ԱԿԽ հանքավայրը («Կապան Նորոգշին» ՍՊԸ, ՇԱԹՎ-29/271, 20.02.2013թ.):

Երևակման տարածքից մոտ 4կմ հյուսիս-հյուսիս-արևմուտք է գտնվում «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ կողմից շահագործվող Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրը:


ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ SYUNIK MARZ

Մարզկենտրոնը ԿՊՊՍՆ
7 քաղաք, 131 բնակավայր
Մարզային նշանակության
ճանապարհների երկարություն՝ 547կմ


KAPAN the center
7 cities 131 settlements
Instate roads 547km

Մյուսիքի ԱԿՆ երևակում

14



Նկար 2.



Նկար 3.




Նկար 4.

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Մասշտաբ 1 : 500

Կոորդինատային համակարգը՝ WGS-84 (ARMREF 02)



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ



Երկրաբանահետախուզական աշխատանքների տարածք
(Սյունիքի ԱԿԽ երևակում)



Կատարող

Որակավորման վկայականի

№ 34
(Համարը)

տրված

Գրգիշ Շահապաշյան 12. հունիս. 2025
(Անուն, ազգանուն) (Ամիս, ամսաթիվ)

20. փետրվար 2025թ.

Նկար 5.

4.2 Նախատեսվող գործունեության բնութագիր

Սյունիքի ավազակոպճային խառնուրդի երևակման շրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են յուրայի և կավճի հրաբխածին-նստվածքային նստվածքային, ստորին չորրորդական հրաբխային և վերին չորրորդական-ժամանակակից բերվածքային առաջացումները: Տարածքի շերտագրական կտրվածքը ըստ Վ.Ամարյանի ներկայացված է հետևյալ կերպ (ներքևից-վերև)։

- միջին յուրա, վերին բայոս-ստորին բատ ($J_2 b_2 - bt_1$) - նշաքարային անդեզիտներ, պլագիոկլազային, քվարցային անդեզիտադացիտներ, դրանց տուֆեր և տուֆափշրաքարեր, տուֆաալերոլիտների, տուֆաավազաքարերի դարսաշերտեր կավային կրաքարերի ոսպնյակներով : Հաստվածքի հզորությունը 800-900մ ;
- միջին յուրա, ստորին բատ ($J_2 bt_1$) – 200-300մ հզորությամբ անդեզիտադացիտների և քվարցային դացիտների, դրանց տուֆերի և տուֆափշրաքարերի հաստվածք ;
- միջին յուրա, քելովեյ ($J_3 k$) - մոտ 200մ հզորությամբ լապիլային-բեկորային տուֆեր, տուֆակոնգլոմերատներ, անդեզիտաբազալիտների հիալոկլաստիտներ, անդեզիտների և անդեզիտաբազալիտների հոսքեր, տուֆաավազաքարեր կրաքարերի ոսպնյակներով ;
- վերին յուրա, օքսֆորդ-ստորին տիտոն ($J_3 ott_1$)– մինչև 1900մ հզորությամբ բազալիտներ, անդեզիտաբազալիտներ, տրախիանդեզիտաբազալիտներ, լապիլային մեծաբեկորային և փսամիտային տուֆեր, տուֆաավազաքարեր, բազալիտների և անդեզիտաբազալիտների հիալոկլաստիտներ, կրաքարային տուֆերի և կրաքարերի ոսպնյակներ *Rhyilchenella dilatata* Roll բրածո մնացորդներով;
- վերին յուրա, ստորին տիտոն ($J_3 tt_1$) – մոտ 700մ հզորությամբ բազալիտներ, անդեզիտաբազալիտներ, տրախիանդեզիտաբազալիտներ, դրանց տուֆեր և տուֆափշրաքարեր, կոնգլոմերատներ, օրգանածին կրաքարեր *Nerinea Silesiaca* Zitt, *Nerinea Strambergensis* Pet բրածո մնացորդներով;
- վերին յուրա, վերին տիտոն-ստորին կավիճ, միջին վալանժին ($J_3 tt_2 - K_1 v_2$): Կապանի բրախիանտիկլինալ ծալքի թևերը կազմող մինչև 3000մ հզորությամբ հրաբխածին և հրաբխածին-նստվածքային առաջացումներ. Կարմրաքարի նստվածքային և էֆուզիվ հաստվածք, Խուստուպ-Չիմանի էֆուզիվ-մերձհրաբխածին առաջացումներ՝ բազալիտներ, անդեզիտաբազալիտներ, տրախիանդեզիտաբազալիտներ, անդեզիտադացիտներ և դրանց

տուֆեր, տուֆափշրաքարեր, փշրաքարային լավաներ, կոնգլոմիշրաքարեր, կրաքարեր, կոնգլոմերատներ, ավազաքարեր

- ստորին կավիճ, գոտերիվ-բարեմ ($K_1 g-br$) – մոտ 400մ հզորությամբ օրգանածին ավազային կրաքարեր և կոնգլոմերատներ *Halcodizcus perezianus* d,Orb, *Pulchellia saurageari* Herm բրածո մնացորդներով;

- ստորին կավիճ, բարեմ ($K_1 br$) – նուրբ- և միջին-շերտավոր մոխրագույն, վարդագույն երանգով օրգանածին ավազային կրաքարեր ;

- միջին չորրորդական (βQ_{II}) – Աճանան գետի միջին և վերին հոսանքի ձախակողմյան լանջերին տարածված բազալտային հոսք : Հոսքի ընդհանուր ձգվածությունը մինչև 10կմ, լայնությունը 0.5-2.5կմ, միջին հզորությունը՝ 30-40մ :

- վերին չորրորդական (Q_{III}) դելյուվիալ և ալյուվիալ-պրոլյուվիալ գլաքարեր, ավազներ, կավավազներ մինչև 20մ հզորությամբ,

- ժամանակակից (Q_{IV}) ալյուվիալ-դելյուվիալ գլաքարեր, ավազներ, կավավազներ, մեծաբեկորային նստվածքներ մոտ 30մ հզորությամբ :

Մերձհրաբխային և ինտրուզիվ առաջացումները ներկայացված են.

- միջին յուրայի պլագիոգրանիտներ – մերկայացված են Կապան քաղաքի տարածքում կառուցվածքային հորատանցքերի հորատման ժամանակ,

- միջին յուրայի գաբրոների դայկանման մարմիններ,

- վերին յուրայի գաբրոների շտոքեր և դայկանման մարմիններ,

- ստորին կավճի մետամորֆիզացված, խոշոր պորֆիրային բազալտների (β) և անդեզիտաբազալտների ($\alpha\beta$) շտոքեր և սիլեր:

Տեկտոնական շրջանացման տեսակետից, ըստ Ա. Ասլանյանի, տարածքը իրենից ներկայացնում է մոնոկլինորիում, որի առանցքն անցնում է Կապան քաղաքի վրայով հյուսիս-արևմտյան ուղղությամբ ($310-320^\circ$, անկման անկյունը $35-45^\circ$), թևերը բարդեցված են երկրորդական ծալքավորմամբ: Մոնոկլինալ ծալքի արևմտյան թևում առանձնացվում է Ագարակ-Կարմրավանքի անտիկլինալը, որի առանցքը ևս ունի հյուսիս-արևմտյան ($325-335^\circ$) տարածում: Երկրորդական ծալքերը կազմված են վերին յուրայի և կավճի ապարներով, առանձին դեպքերում բարդեցված են միջօրեական և լայնական ուղղությամբ ձգվող խզումներով:

Նախնական ուսումնասիրության տվյալներով, Սյունիքի երևակման տարածքը պատկանում է գետաոռոդատային տիպի հանքավայրերի խմբին և ծագումնաբանորեն կապված է Ողջի գետի ժամանակակից ոռոդահունային նստվածքների հետ:

Տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ժամանակակից այլուվիալ ավազակոպճային և ավազակավային նստվածքները: Այլուվիալ նստվածքները հանդիսանում են երևակման օգտակար հանածո և պատկանում են ավազակոպճային ապարների ժամանակակից գետահովտադարավանդային առաջացումների դասին:

Օգտակար հաստվածքը հիմնատակվում է կավավազների շերտով:

Ավազակոպճային կուտակը մակերեսից վրածածկված է 0.2-0.3մ հզորությամբ հողաբուսական շերտով (հաշվարկներում ընդունվում՝ 0.25մ միջին հզորություն):

Հայցվող տարածքը տեղակայված է Ողջի գետի ձախափնյա հատվածում: Տեղամասի լայնությունը տատանվում է 72-138մ-ի սահմաններում, երկարությունը՝ 208մ, այն բնութագրվում է մերձհորիզոնական տեղադրմամբ: Հարակից տարածքներում գտնվող ավազակոպճային խառնուրդի հանքավայրի տվյալների վերլուծությունից հետևում է, որ օգտակար կուտակի հզորությունը կարող է կազմի առավելագույնը 4.5մ-ի:

Տեղամասի տարածքում կատարված նախնական դիտարկումների համաձայն՝ ավազը տարակազմ-հատիկային է, դիտարկվել են քվարցի, դաշտային սպաթի, մուգ միներալների, տարբեր ապարների հատիկներ: Հատիկների ձևը անկունավոր է, թույլ հղկված: Կոպճային բերվածքները պոլիմիկտային են, կազմված հիմնականում հրաբխածին ապարների և միներալների բեկորներից: Կոպճի չափերը հասնում են 08-1.0սմ-ի:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի օգոստոսի 11-ի N06-Ն հրամանի հավելված 3-ի հրահանգի աղյուսակ 1-ի՝ երևակմամբ պատկանում է 2-2 խմբին՝ բոլոր ծագումնաբանական տիպերի ոչ մեծ ոսպնյակաձև կամ ոչ կանոնավոր տեսքի հանքավայրեր՝ օգտակար սովորաշերտի ոչ կայուն կառուցվածքով և փոփոխական հզորությամբ կամ ավազի ու կոպճի փոփոխական որակով:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող Սյունիքի ավազակոպճային խառնուրդի երևակումում կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների ծրագիրը կազմված է ըստ «Инструкция по составлению проектов и

смет на геологоразведочные работы» և «Ավազի և ավազակոպճային խառնուրդի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման» հրահանգների հանձնարարականների:

Երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել երկրաբանահանույթային, մակերևութային հետախուզական փորվածքների անցման, փաստագրման և նմուշարկման աշխատանքների համալիրով:

Համաձայն «Ավազի և ավազակոպճային խառնուրդի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգ»-ի՝ ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության, Սյունիքի երևակումը համապատասխանում է 2 խմբի 2-րդ ենթախմբին՝ բոլոր ծագումնաբանական տիպերի ոչ մեծ ոսպնյակաձև կամ ոչ կանոնավոր տեսքի հանքավայրեր՝ օգտակար ստվարաշերտի ոչ կայուն կառուցվածքով և փոփոխական հզորությամբ կամ ավազի ու կոպճի փոփոխական որակով:

Այս խմբի հանքավայրերի համար նախատեսված է պաշարների դասակարգում B և C₁ արդյունաբերական կարգերով: B կարգով եզրագծման համար հետախուզական փորվածքների միջև հեռավորությունը կազմում է 50-100մ, C₁ կարգով՝ 100-200մ:

Ընդ որում հաշվի առնելով երևակման պարզ երկրաբանական կառուցվածքը, օգտակար հանածոյի մարմնի մորֆոլոգիական ձևը և չափերը, հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել մինչև 4.5մ խորությամբ թվով 17 հետախուզահորերի միջոցով: Հետախուզահորերի կտրվածքը ընդունվում է 1.5մx1.0մ:

Հետախուզական հորերի միջև հեռավորությունը կազմում է 14.7-72մ, դրանք եզրագծում են հայցվող տարածքը ամբողջ պարագծով և թույլ են տալիս պարզաբանել ԱԿԽ կուտակի կառուցվածքը սահմանագատված ամբողջ տարածքում: Ընտրված հետախուզացանցը թույլ կտա օգտակար հանածոյի հետախուզված պաշարները հաշվարկել արդյունաբերական B կարգով:

Օգտակար հանածոյի որակական հատկությունները պետք է ուսումնասիրվեն ըստ «Ավազ շինարարական աշխատանքների համար. Տեխնիկական պայմաններ» ԳՈՍՏ 8736-2014 և , Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 8267-95 ՀՍՏ ԳՈՍՏ տեխնիկական պահանջների:

Նախապատրաստական շրջան, ծրագրի կազմում,

կազմակերպում և լուծարում

Մինչև նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմելը, անհրաժեշտ է ծանոթանալ ֆոնդային և հրատարակված նյութերին, ինչպես նաև գործող հրահանգներին և ԳՈՍՏ-երին:

Կատարողների աշխատանքի ծախսը կազմում է.

I կարգի երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս

տեխնիկ-երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս:

Ընդամենը՝ - 2 մարդ - 1 ամիս:

Նախագծի կազմում.

I կարգի երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս

տեխնիկ-երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս:

Ընդամենը՝ - 2 մարդ - 1 ամիս:

Կազմակերպում և լուծարում

Հանաձայն “Инструкция по составлению проектов и смет на геологоразведочные работы” հրահանգի պահանջների, աշխատանքների կազմակերպման ծախսերը կազմում են դաշտային աշխատանքների նախահաշվային արժեքի 1%-ը:

Դաշտային աշխատանքների ավարտից հետո նախատեսվում են լուծարման աշխատանքներ, որոնց ծախսերը կազմում են դաշտային աշխատանքների արժեքի 0.8%-ը:

Երկրաբանահանույթային աշխատանքներ

Տարածքի տոպագրաֆիական հանույթը իրականացվել է նախնական դիտարկումների և ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքը հայցելու փաթեթը կազմելուց առաջ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով որակավորում ստացած մասնագետի կողմից:

Երևակման տարածքի երկրաբանական կառուցվածքի ճշտման, տարատեսակ առաջացումների զարգացման գոտիների քարտեզագրման նպատակով նախատեսվում է 2.11 հա մակերեսով տարածքում կատարել 1:1000 մասշտաբի երկրաբանահանույթային աշխատանքներ:

Երևակման երկրաբանական քարտեզի կազմման համար անհրաժեշտ երկրաբանական երթուղիների ընդհանուր երկարությունը կկազմի մոտ 2.1կմ:

Հետախուզական փորվածքների անցում

Օգտակար հանածոյի մարմնի եզրագծման, ուսումնասիրման և նմուշարկման նպատակով նախատեսվում է հետախուզահորերի անցում: Այդ աշխատանքները կիրականացվեն մեխանիկական եղանակով՝ Hitachi 2x200 մակնիշի էքսկավատորով V-րդ կարգի ամրության ապարներում:

Նախատեսվում է 17 հետախուզահորերի անցում, որոնց առավելագույն խորությունը նախատեսվում է 4.5մ, կտրվածքը՝ 1.5մ², ընդհանուր առավելագույն ծավալը՝ 114.75մ³:

Հետախուզահորերի անցման ժամանակ առաջանալու է 114.75մ³ ապարազանգված, որից 6.375մ³ հողաբուսական զանգված և 108.375մ³ ավազակոպճային կուտակ:

Հետախուզական փորվածքների փաստագրում

Բոլոր հետախուզական հորերը ենթակա են մանրամասն երկրաբանական փաստագրման: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:50 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալը նախատեսվում է 76.5գծ.մ:

Ծավալային զանգվածի որոշում դաշտային պայմաններում

Նախատեսվում է հետախուզահորերի անցման ընթացքում, դաշտային պայմաններում երեք կետում որոշել բնամասում ավազակոպճային խառնուրդի բնական խտությունը, ծավալալիքային զանգվածը, ինչպես նաև հումքի փխրեցման գործակիցը:

Նմուշարկում

Երևակման ավազակոպճային խառնուրդը նախատեսվում է ուսումնասիրել որպես հումք շինարարական ավազի և խճի արտադրության համար:

Օգտակար հանածոյի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է վերցնել նմուշներ հետախուզահորերից, կուտակի լրիվ հզորությամբ 40x40սմ կտրվածքով ակոսային նմուշների միջոցով: Ելնելով ավազներում կոպճային նյութի առկայության հնարավորությունից, մեծ կտրվածքով մեծազանգված նմուշները ապահովում են կուտակի հատիկաչափական կազմի բարձր հավաստիության տվյալների

ստացումը: Ակոսային նմուշները նախատեսվում է վերցնել հետախուզական փորվածքների պատից՝ ավազակոպճային կուտակի ամբողջ հզորությամբ:

Կախված ավազակոպճային կուտակի հզորությունից, ակոսների երկարությունը կարող է տատանվել մինչև 4.5մ:

Հաշվի առնելով ավազակոպճային կուտակի պարզ, գործնականում համասեռ ներքին կառուցվածքը, օգտակար հանածոյի հատիկաչափական կազմի ոչ մեծ փոփոխականությունը և կուտակի հզորությունը, յուրաքանչյուր հետախուզական փորվածքում նմուշարկումը նախատեսվում է իրականացնել կուտակի լրիվ հզորությամբ մեկ միասնական նմուշով: Անհրաժեշտության դեպքում կկիրառվի հատվածամասերով (սեկցիաներով) նմուշարման եղանակը:

Նմուշների մշակումը նախատեսվում է կատարել հետևյալ կերպ. նմուշարկման ակոսից վերցված ամբողջ նյութը լցվելու է բրեզենտե փովածքի վրա, խառնվելու է և կրճատման եղանակով հասցվելու է 40կգ-ի, որն էլ կազմվելու է շարքային նմուշի նյութը: Այն լցվելու է առանձին պարկերի մեջ, պիտակավորվելու է և ուղարկվելու է լաբորատորիա՝ ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար:

Նախատեսվում է վերցնել 19 նմուշ ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար (որից 2 նմուշը՝ հսկողական), 2 նմուշ քիմիական անալիզների և 2 նմուշ միներալոգո-պետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար: Լաբորատոր փորձարկումներին ուղարկվող նմուշների ընդհանուր ծավալը կազմում է մոտ 1.2մ³:

Տոպո-մարկշեյթերական աշխատանքներ

Բոլոր հետախուզական փորվածքները և երկրաբանական սահմանները տեղադրվելու/նշվելու են գործիքային կապակցմամբ:

Ինժեներա-երկրաբանական, հիդրոերկրաբանական

և ռադիոմետրիական ուսումնասիրություններ

Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել տարածքի հեռանկարային շահագործման ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրություններ, ավազակոպճային խառնուրդի ռադիոմետրիական հատկությունների պարզաբանում, որը կիրականացվի հետախուզական փորվածքների անցման ընթացքում կատարվելիք դիտարկումներով:

Օգտակար հանածոյի ռադիացիոն-հիգիենիկ հատկությունների ուսումնասիրման նպատակով ռադիոմետրիական հետազոտությունները կկատարվեն СРП 68-01 սարքի միջոցով:

Հետախուզական փորվածքների հետլցնում

Նմուշարկման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է հետախուզահորերի անցման ժամանակ առաջացած 107.875մ^3 ծավալով ավազակոպճային կուտակի հետլցնում (108.375մ^3 ավազակոպճային զանգվածից լաբորատոր փորձարկումների է ուղարկվում 0.5մ^3 ծավալ): Այնուհետև, հետլվցած հորերի մակերեսին փովելու է նախապես հեռացված, առանձին կուտակված հողաբուսական շերտը՝ ընդհանուր 6.375մ^3 : Հորերի հետլցման աշխատանքները Hitachi 2x200 մակնիշի էքսկավատորով, հողաբուսական շերտի փռումը՝ ձեռքով:

Հաշվետվության կազմման աշխատանոցային աշխատանքներ

Սյունիքի ԱԿԽ երևակման տարածքում երկրաբանահետախուզական աշխատանքների և օգտակար հանածոյի լաբորատոր ուսումնասիրությունների ավարտից հետո կկատարվեն աշխատանոցային աշխատանքներ, որի ընթացքում.

- կամփոփվեն և կհամակարգվեն դաշտային փաստացի երկրաբանական նյութերը, լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքները,
- կտրվի տեղամասի երկրաբանատնտեսագիտական գնահատականը,
- կկատարվի օգտակար հանածոյի պաշարների հաշվարկը,
- կկազմվի երկրաբանական հաշվետվություն՝ տեղամասի երկրաբանատնտեսական գնահատմամբ և պաշարների հաշվարկմամբ:

Կազմված հաշվետվությունը կներկայացվի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան մասնագիտական ստորաբաժանման ղիտարկմանը:

Բեռների և ուղևորների փոխադրում

Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բեռների փոխադրումը կկատարվի գոյություն ունեցող ասֆալտապատ և հողածածկ միջհամայնքային ճանապարհներով: Նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում: Անձնակազմի տեղափոխումը կատարվելու է ընկերության

սեփականություն հանդիսացող RANGE ROVER SPORT 500 SS 10 պետհամարանիշով մարդատար ավտոմեքենան թեթև մարդատար մեքենայով:

Տրանսպորտային ծախսերն ընդունվում են դաշտային աշխատանքների նախահաշվային արժեքի 10%-ի չափով:

Աշխատանքների անվտանգության տեխնիկան

Ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները կկատարվեն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի, ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի և «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվային փաստաթղթերի դրույթներին համապատասխան:

Մասնավորապես, «Կապանի ճանապարհների շահագործման և շինարարական» ՍՊ ընկերության վարչակազմը պարտավորվում է ապահովել աշխատանքների տեխնիկական անվտանգության հետ կապված հետևյալ պահանջները.

- աշխատանքի են թույլատրվում համապատասխան մասնագիտական կրթություն կամ որակավորում ունեցող անձիք,

- աշխատանքներում ներգրավված ողջ անձնակազմը յուրաքանչյուր դաշտային սեզոնից առաջ անցնում է պարտադիր անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում,

- բացառվում է աշխատանքների իրականացումը այն տարածներում, որտեղ հնարավոր են սողանքային, քարաթափման, սելավային երևույթներ կամ առկա է ջրհեղեղի վտանգ,

- դաշտային պայմաններում աշխատանքներ իրականացնող անձնակազմը պետք է ունենա համապատասխան հանդերձանք, պիտույքներ, առաջին բժշկական օգնության անհատական պարագաներ, արտակարգ իրավիճակի վերաբերյալ ազդարարման գործիքակազմ,

- երկրաբանական երթուղիները իրականացվելու են առնվազն երկու աշխատակցի մասնակցությամբ,

- երկրաբանական երթուղիները կատարվելու են բացառապես օրվա լուսավոր ժամանակահատվածում,

- վտանգավոր տեխնիկական օբյեկտների (էլեկտրահաղորդման օղային գծեր, կաբելային գծեր, գազատարեր, երկաթգիծ և այլն) պահպանման գոտիներում

աշխատանքների իրականացման անհրաժեշտության դեպքում դրանք համաձայնեցվում են տեխնիկական օբյեկտները շահագործող կազմակերպությունների հետ: Երկրաբանահետախուզական աշխատանքներ իրականացնող մասնագետներին տրամադրվում են վտանգավոր գոտիների Բաշխումը արտահայտող քարտեզներ,

- Էլեկտրական ցանցերի ենթակառուցվածքների տարածքում մեքենաների տեղաշարժը կատարվում է բացառապես այն հատվածներով, որտեղ ճանապարհի հարթության և օդային գծերի միջև առկա անհրաժեշտ տարածություն,

- բոլոր սարքավորումները շահագործվում են տեխնիկական փաստաթղթերին համապատասխան,

- արգելվում է մեխանիզմների և սարքավորումների շահագործում տեխնիկական անձնագրերով սահմանված բեռնվածությունների (ճնշում, հոսանքի ուժ, լարում և այլն) գերազանցման դեպքում,

- կտրող սայրերով գործիքների, սարքերի տեղափոխումը պետք է իրականացվի պաշտպանիչ ծածկաշապիկներով,

- աշխատաժամանակի առավելագույն տևողությունը չի գերազանցելու օրական 10 ժամից (հանգստի և սնվելու համար՝ ընդմիջումը ներառյալ),

- աշխատանքները պետք է իրականացվեն ընդհատվող՝ 6-օրյա աշխատանքային շաբաթով,

- աշխատանքային շաբաթը ընդհատվելու է նաև տոնական ու հիշատակի հանգստյան օրերին:

Աշխատակիցները պետք է ապահովված լինեն հանգստի և սննդի ընդունման հարմարավետ տարածքով՝ աշխատանքները սպասարկվելու են բեռնարկղային տիպի ճաշարանն ու ջրցուղարանը:

Աշխատանքների կատարման ժամկետներն են.

Աշխատանքների սկիզբը - IV եռամսյակ 2025թ.

Աշխատանքների ավարտը - III եռամսյակ 2028թ.:

Աշխատանքների իրականացման ժամանակացույցը և նախահաշիվը ներկայացված են ստորև:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ Սյունիքի մարզի Սյունիքի ավազակոչային խառնուրդի երևական երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման և ստացված տեղեկությունը պետական փորձաքննության ներկայացնելու

Աշխատանքների տեսակները	Զախման միավորը	Ծավալը	Աշխատանքների կատարման ժամանակահատվածը											
			2025				2026				2027			
			IV	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III
1	2	3	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Երկրաբանահանության աշխատանքներ	հա	2.11	2.11											
Երկրաբանական երթուղիներ	կմ	2.1	2.1											
Փորվածքների մարկշեյ-դերական տեղորոշում	փորվածք, հաս	17		17										
Հետախուզահորերի անցում	խ.մ.	114.75		60.75	54									
Փաստագրում	փորվածք, հաս	17		9	8									
Ակոսային եղանակով նմուշարկում	նմուշ	19		10	9									
Նմուշներ քիմիական անալիզի համար	նմուշ	2		1	1									
Նմուշներ միներալոգո-պետրոգրաֆիական նկարագրության համար	նմուշ	2		1	1									
Հումքի ֆիզ-մեխ. փորձարկումներ	նմուշ	19				19								
Հումքի միներալոգո-պետրոգրաֆիական նկարագրություն	նմուշ	2				2								

1	2	3	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Քիմիական անալիզներ	նմուշ	2				2								
Դաշտային պայմաններում բնական խտության, ծավալային խտության, զանգվածի, փխրեցման գործակցի որոշում	կետ	3		1	2									
Ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական ուսումնասիրություններ	հա	2.11												
Ռադիոմետրիական ուսումնասիրություններ	հա	2.11												
Շրջակա միջավայրի մշտադիտարկում														
Աշխատանքային աշխատանքներ														
Ռեկուլտիվացման աշխատանքներ (հորերի հետցնում, պատում, հողաբուսական շերտով, սերմերի ցանք)	ք.մ.	25.5												
Ամփոփ հաշվետվության կազմում														
Հաշվետվության ներկայացում ՀՀ ՏԿԵՆ քննարկմանը												2028թ.-ի հունվարի 3		

Ամփոփ նախահաշիվ

ՀՀ Սյունիքի մարզի Սյունիքի ավագակոպճային խառնուրդի երևակման

տարածքում 2025-2028թթ. կատարվելիք

երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման

Հ/Հ	Աշխատանքի տեսակը	Չափ. միավ.	Միավ. արժեքը, հազ.դրամ	Ծավալը	Գումարը, հազ.դրամ
1	2	3	4	5	6
1.	Երկրաբանական հանույթ, երթուղիներ	հա	50.0	2.11	105.5
2.	Հետախուզահորերի անցում, փաստագրում, նմուշարկում	գծ.մ	5.0	76.5	382.5
3.	Հետախուզահորերի հետլցնում, ռեկուլտիվացիա	հազ.դրամ			226.0
4.	Ռադիոմետրիական դիտարկումներ	հազ.դրամ			150.0
5.	Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական դիտարկումներ	հազ.դրամ			150.0
6.	Ավազի ծավալային զանգվածի որոշում դաշտային պայմաններում	նմուշ	15.0	3	45.0
7.	Ընդամենը դաշտային և նախապատրաստական աշխատանքներ				1059.0
8.	Բեռների և ուղևորների տեղափոխում	%		7-րդ տողի 10%	105.9
9.	Աշխատանքների կազմակերպում	%		7-րդ տողի 1%	10.59
10.	Աշխատանքների լուծարում	%		7-րդ տողի 0.8%	10.58
11.	Ընդամենը օժանդակ աշխատանքներ				127.07
12.	Ընդամենը նախապատրաստական, դաշտային և օժանդակ աշխատանքներ				1186.07
13.	ԱԱՀ 20%	%		12-րդ տողի 20%	237.21
14.	Փոխհատուցում հողօգտագործան համար	հազ.դրամ			9.0
15.	Ֆիզ.մեխ. փորձարկումներ	նմուշ	25.0	19	475.0

1	2	3	4	5	6
16.	Միներալոպետրոգրաֆիական նկարագրություն	նմուշ	50.0	2	100.0
17.	Քիմիական հետազոտություններ	նմուշ	25.0	2	50.0
18.	Շրջակա միջավայրի մոնիթորինգ	հազ.դրամ			1590.0
19.	Ընդամենը	հազ.դրամ			3647.3
20.	Չնախատեսված ծախսեր	%		20-րդ տողի 10%	729.5
21.	Ամբողջը	հազ.դրամ			4376.8

4.3 Երկրաձևաբանություն, լանջերի թեքություն

Երկրաձևաբանական տեսակետից Սյունիքի երևակման շրջանը հյուսիսից շրջափակված է Բարգուշատի, արևմուտքից՝ Մեղրու և կենտրոնական մասից՝ Խուստուփ-Կատարի լեռներով, որոնք հանդիսանում են Զանգեզուրի լեռնաշղթայի ճյուղավորումները:

Երևակման տարածքի հիմնական երկրաձևաբանական միավորը Խուստուփ-Կատարի աղեղնաձև լեռնաշղթան է (Խուստուփ, 3202 մ), որը Ողջիի հովտով բաժանվում է Խուստուփ և Կատար զանգվածների: Սկսվում են Բարգուշատի լեռների Թառակատար լեռնագագաթից, անցնում Խուստուփի լեռնազանգվածով, հասնում մինչև Ծավ և Շիկահող գետերի միախառնման վայրը:

Խուստուփ-Կատարի լեռներին, որոնց բնորոշ են միջին բարձրություններ, ռելիեֆը՝ արիդային-դենտոլացիոն: Լեռնաշղթայի կենտրոնական մասում Ողջի գետի վտակների երոզիայի բազիսի ցածր դիրքի շնորհիվ ուժգին արտահայտված է խորքային ողողատարումը: Գետակների հատակի երկրայնական կտրվածքն աստիճանաձև է, V-նման: Բարձրությունների տատանումը գետերի ակունքների և հունների միջև հասնում է 2000մ-ի: Լեռնաշղթան Կապանի երևակման շրջանում կազմված է վերին յուրայի հասակի հրաբխածին-նստվածքային առաջացումներով:


Լեռնաշղթային բնորոշ է ասինետրիկ կառուցվածք՝ հարավ-արևմտյան և արևմտյան լանջերը զառիթափ են և կարճ, իսկ հյուսիսային և հյուսիս-արևելյան լանջերը՝ մեղմաթեք, երկար և աստիճանաձև:

Ողջին տիպիկ լեռնային գետ է, նեղ ոլորապտույտ հունով, հոսքի մեծ արագությամբ և բազմաթիվ մանր վտակներով, որոնք իրենցից ներկայացնում են լեռնային առվակներ: Վերին հոսանքում գետը հոսում է սառցադաշտային հովտով, այնուհետև կտրում է Խուստուփ-Կատարի լեռնազանգվածը՝ առաջացնելով 600-800 մ խորությամբ կիրճ: Կապան քաղաքի տարածքում հովիտը վերածվում է լայն գոգավորության, առաջացնում գետային դարավանդներ:

Սյունիքի երևակման տարածքը կապված է Ողջի գետի լայն տաշտակաձև գոգահովտի հետ, ներկայացված է 2-3° թեքությամբ հարթավայրային տարածքով :

Շրջանի լեռների երկրաձևաբանական և մակերևույթի թեքության անկյունների սխեմատիկ քարտեզները բերվում են ստորև նկար 6-7-ում:

ՍՅՈՒՆԻՔԻ ԱՎԱԶԱԿՈՂԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ԵՐԵՎԱԿՈՒՄ
ԵՐԿՐԱԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԱՐԴԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ
Կազմված է 1:10000 մասշտաբի J-38-33-B-g-4 անվանակարգային թերթի հենքի վրա




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- 1 - Ներլեռնային ցածր դարավանդավորված նեղ գոգահովիտ
2 - Միջին բարձրության /1500-2500մ/ ուղիղ լանջերով և ալիքաձև զազաթներով լեռնաշղթաներ,
խորը կտրտված V-աձև հովիտներով և ձորակներով

Նկար 6.

ՍՅՈՒՆԻՔԻ ԱՎԱԶԱԿՈՂԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ԵՐԵՎԱՆԻՄ
 ԼԱՆՁԵՐԻ ԹԵՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ
 Կազմված է 1:25000 մասշտաբի J-38-33-B-g-4 անվանակարգային թերթի հենքի վրա



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- 1 - Հարթավայրեր /0-4 աստիճան թերթությամբ/
- 2 - Մեղմաթեր հարթավայրեր և լանջեր /5-14 աստիճան թերթությամբ/
- 3 - Թեք և մեղմ կտրուկ լանջեր /20-29 աստիճան թերթությամբ/

Նկար 7.


4.4 Սեյսմիկ կառուցվածք, արտածին երկրաբանական երևույթներ,

Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ Սյունիքի ԱԿԽ երևակման տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 300սմ/վրկ² գրունտի հորիզոնական արագացման մեծություն (նկար 8):



Նկար 8.

Տեղամասի տարածքում սողանքային երևույթներ չեն արձանագրվել (հիմք՝ Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագիր, Միջազգային համագործակցության Ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005): Հայցվող տարածքից մոտ 505մ հյուսիս քարտեզագրված է SYUN-033-2840 սողանքային մարմինը (նկար 9-10):




Նկար 9.

Սողանքային մարմնի բնութագրերը ներկայացված են ստորև, աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.


Սողանքի կենտրոնի կոորդինատներն ու բարձրությունը							Սողանքային մարմնի չափերը		
հս. լայն.			արլ. երկ.			Բարձր. ծ.մ. (մ)	լայն. (մ)	երկար. (մ)	մակերես (հա)
աստ.	րոպե	վայրկ.	աստ.	րոպե	վայրկ.				
39	12	43	46	28	56	835	1900	3100	576



Նկար 10.

4.5 Կլիմայական պայմաններ

Հայցվող տարածքում կլիմայական բնութագրվում է որպես տաք (նկար 11):



Նկար 11.

Ստորև աղյուսակներում ներկայացվում են տարածքի կլիմայական բնութագրերը (ըստ մոտակա Կապան օդերևութաբանական կայանի տվյալների):

Աղյուսակ 2.

Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C

Ըստ ամիսների											
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
0.8	2.4	5.9	11.5	16.3	20.6	23.7	23.1	18.9	13.1	7.3	2.6

Երևակման շրջանում միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է 12.2°C, բացարձակ նվազագույնը՝ -22.1°C, բացարձակ առավելագույնը՝ 42.4°C :

Աղյուսակ 3.

Օդի միջին առավելագույն (մ.ա.) և միջին նվազագույն (մ.ն.) ջերմաստիճանը, °C

	Ըստ ամիսների											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
մ.ա.	8.1	9.4	12.6	18.1	22.8	27.2	30.3	30.0	25.4	19.8	14.2	9.9
մ.ն.	-4.1	-2.5	0.8	5.8	10.4	14.0	16.9	16.5	13.2	7.8	2.5	-2.1

Աղյուսակ 4.

Օդի դիտված բացարձակ առավելագույն (ա) և նվազագույն (ն) ջերմաստիճանը, °C

	Ըստ ամիսների											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
ա	22.9	25.6	31.6	35.5	35.5	42.4	39.1	39.5	38.4	33.5	29.5	25.9
ն	-22.1	-19.0	-15.7	-9.7	-0.3	2.2	9.0	8.3	0.1	-5.8	-15.0	-17.5

Աղյուսակ 5.

Նշված սահմաններում օդի միջին օրական ջերմաստիճանով օրերի քանակը

Ջերմաստիճանային միջակայք, T, °C				Ըստ ամիսների											
				I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Կապան															
-19.9	-ից	մինչև	-15.0	0.02											
-14.9	-ից	մինչև	-10.0	0.2	0.1										0.1
-9.9	-ից	մինչև	-5.0	2.3	1.3	0.2								0.05	1.0
-4.9	-ից	մինչև	0.0	10.0	6.7	2.6	0.1						0.01	0.9	6.4
0.1	-ից	մինչև	5.0	14.2	12.9	10.3	2.0	0.04					0.6	6.9	15.6
5.1	-ից	մինչև	10.0	3.6	6.6	12.6	8.1	0.9	0.04			0.1	5.2	15.8	7.1
10.1	-ից	մինչև	15.0	0.2	0.7	4.9	14.4	8.7	1.2	0.1	0.2	3.7	16.8	6.2	0.8
15.1	-ից	մինչև	20.0	0.02		0.4	5.3	18.2	10.7	2.7	3.4	15.1	8.3	0.2	0.02
20.1	-ից	մինչև	25.0			0.04	0.1	3.1	16.8	18.9	20.7	10.8	0.2		
25.1	-ից	մինչև	30.0						1.2	9.4	6.7	0.2			

Աղյուսակ 6.

Օդի նշված ջերմաստիճաններով օրերի միջին (մ) և առավելագույն (ա) քանակը ցուրտ ժամանակահատվածի համար

Ամիս	Օդի ջերմաստիճանը, °C (նվազագույն ջերմաչափով)									
	≤-15		≤-20		≤-25		≤-30		≤-35	
	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա
	1	2	3	4	5	6	7	8	9	10
Դեկտեմբեր	0.2	5								
Հունվար	0.5	8	0.04	3						
Փետրվար	0.3	6								

Աղյուսակ 7.

Օդի նշված ջերմաստիճաններով օրերի միջին (մ) և առավելագույն (ա) քանակը տաք ժամանակահատվածի համար

Ամիս	Օդի ջերմաստիճանը, °C (առավելագույն ջերմաչափի տվյալներով)							
	≥25		≥30		≥35		≥40	
	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա
	1	2	3	4	5	6	7	8
Հունիս	22.1	30	8.1	27	0.4	6	0.01	1
Հուլիս	28.8	31	18.6	30	2.3	14		
Օգոստոս	27.9	31	18.2	31	2.1	18		

Աղյուսակ 8.

Օդի էքստրեմալ ջերմաստիճանների միջին արժեքները (°C)
(առավելագույնի միջինը՝ ա.մ., և նվազագույնի միջինը՝ ն.մ.)

	Ըստ ամիսների												
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարեկան
ա.մ.	17.1	19.0	23.1	27.3	29.8	33.1	35.1	35.2	32.5	28.5	23.4	19.3	36.2
ն.մ.	-11.2	-9.8	-6.7	-0.4	5.1	9.3	12.7	12.5	8.0	2.0	-3.9	-8.8	-13.5

Աղյուսակ 9-1.

Օդի հարաբերական խոնավությունը

Ըստ ամիսների												
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Միջին տարեկան
75	75	75	73	74	67	62	63	72	78	78	77	73

Օդի հարաբերական խոնավությունը

Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
75	53	62	44

Մթնոլորտային տեղումները

Տեղումների քանակը						միջին ամսական						մմ	
						օրական առավելագույն							
ըստ ամիսների												Տարեկան	
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		
27	32	63	72	98	64	31	27	39	46	41	26		566
30	40	58	76	99	70	176	70	55	51	63	33		176
Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ							Տեղումների քանակը ապրիլ- հոկտեմբեր ամիսներին, մմ						
189							377						

Ձյան ծածկույթ (արդիականացման ենթակա)

Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
32	31	70	5

Քամի

Ամիսներ	Կրկնելիությունը, %					ըստ ուղղությունների		
	Միջին արագությունը, մ/վ							
	Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան
հունվար	2	2	29	30	6	5	18	8
	2.2	2.0	2.3	2.0	1.9	1.6	2.2	1.9
ապրիլ	2	1	37	32	4	3	12	9
	2.5	2.0	2.9	2.5	2.3	1.9	2.7	2.0
հուլիս	2	2	31	34	6	3	11	11
	2.2	1.9	2.7	2.4	1.9	1.6	2.0	1.6
հոկտեմբեր	1	1	34	32	6	4	12	10
	2.1	1.7	2.5	2.2	1.9	1.6	2.0	1.3
	Անոթորի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ		
հունվար	45	1.	ՀվԱրլ	2.4	Արլ	2.3		
ապրիլ	36	1.5						
հուլիս	39	1.2						
հոկտեմբեր	44	1.1						

Աղյուսակ 13.

Քամու հաշվարկային արագությունը

Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥ 15 մ/վ օրերի քանակը)	Հաշվարկային արագությունը (մ/վ), որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
			25	50	100
935.7	1.2	2	22	24	26

Աղյուսակ 14.

Ուժեղ քամիներով օրերի քանակը

Ամսական միջին արժեքները, օր												Տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
0.3	0.4	0.5	0.4	0.3	0.03	0.03	0.0	0.0	0.1	0.2	0.2	2

Աղյուսակ 15.

Ջեռուցման ժամանակահատվածի սկիզբը, վերջը և տևողությունը

Սկիզբ	Վերջ	Տևողություն, օր
1 նոյեմբեր	6 ապրիլ	157

Աղյուսակ 16.

Ջեռուցման ժամանակահատվածի աստիճան օրերի քանակն օդի տարբեր ելակետային

ջերմաստիճանների դեպքում

Ելակետային ջերմաստիճան, °C	Մեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Գունար
15			234.1	385.1	441.9	356.4	283.0	35.8		1736.3
17			294.1	447.1	503.9	412.4	345.0	47.8		2050.3
18			324.1	478.1	534.9	440.4	376.0	53.8		2207.3

Աղյուսակ 17.

Էնթալպիա (ջերմապարունակություն)

Ամսական միջին արժեքը ըստ ամիսների, ԿՋ/կգ											
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
8.8	11.3	17.5	28.0	39.4	48.0	54.4	53.4	45.2	32.5	20.5	11.9

Աղյուսակ 18.

Տարվա տաք ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (մաս 1)

Օդի ջերմաստիճանը, °C									
ամենատաք օրվա միջին օրական ջերմաստիճանը		ամենա շոգ ամսվա միջինը	տարբեր ապահովվածությամբ (%) առավելագույն ջերմաստիճանը						դիտարկված բացարձակ առավելա - գույնը
ապահովվածություն			ապահովվածություն, %						
0.99	0.95		1	2	5	10	20	50	
30	30	24.0	42	41	40	39	38	36	42

Աղյուսակ 19.

Տարվա տաք ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (մաս 2)

Օդի ջերմաստիճանը, °C													
օրական տատանումը								միջին օրական առավելագույն արժեքը, որը հնարավոր է 1 անգամ «n» տարիների ընթացքում					
առավելագույն օրական տատանումը, որը հնարավոր է 1 անգամ «n» տարիների ընթացքում						ամենա տաք ամսվա միջին օրական տատանումը	ամենա տաք ամսվա առավելագույն օրական տատանումը						
«n»								«n»					
2	5	10	20	50	100			2	5	10	20	50	100
20	22	23	24	25	26	13.5	24.1	27	28	29	29	30	31

Աղյուսակ 20.

Տարվա ցուրտ ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (մաս 1)


Օդի ջերմաստիճանը, °C														
օրական տատանումը							միջին օրական նվազագույն արժեքը, որը հնարավոր է 1 անգամ «n» տարիների ընթացքում							
առավելագույն օրական տատանումը, որը հնարավոր է 1 անգամ «n» տարիների ընթացքում						ամենացուրտ ամսվա միջին օրական տատանումը								
«n»							«n»							
2	5	10	20	50	100									
21	23	24	25	26	27	12.2	-7	-10	-11	-13	-14	-15		

Տարվա ցուրտ ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (մաս 2)

Օդի ջերմաստիճանը, °C														
ամենացուրտ օրվա			ամենացուրտ հնգօրյակի			ամենա ցուրտ ժամա նակա	ամենա ցուրտ ամիս ների միջինը	տարբեր ապահովվածությամբ (%) նվազագույն ջերմաստիճանը						Դիտար կլիմա նվազ գույնը
ապահովվածություն			ապահովվածություն					ապահովվածություն, %						
0.98	0.95	0.92	0.98	0.95	0.92			1	2	5	10	20	50	
-14	-11	-11	-11	-9	-9	1.9	-0.1	-23	-21	-20	-18	-16	-14	-22


4.6 Մթնոլորտային օդ

Մթնոլորտային օդի որակի մոտակա դիտակայանը գտվում է Կապան քաղաքի սահմաններում, որտեղ ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մշտադիտարկում կատարվում է 11 դիտակետերում (նկար 12):




Նկար 12.

Կապան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: 2025 թվականի մայիս ամսին իրականացված դիտարկումների տվյալները ներկայացված են ստորև, նկարներ 13-14-ում:



Նկար 13.



Նկար 14.

Ազդակիր Սյունիք բնակավայրում մթնոլորտային օդի որակի դիտակայաններ չկան:

Որպես մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ելակետային տվյալ ընդունվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի» կենտրոն ՊՈԱԿ-ի ժամանակավոր առաջարկություններով սահմանված տեղեկատվությունը:

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ ³)			
	փոշի	ծծմբի երկօքսիդ (SO ₂)	ազոտի երկօքսիդ (NO ₂)	ածխածնի օքսիդ (CO)
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

Ազդակիր Սյունիք բնակավայրի բնակչությունը չի գերազանցում 10 հազար մարդը, հետևաբար փոշու ֆոնային կոնցենտրացիան տեղամասի տարածքում ընդունվում է 0.071մգ/մ³, ծծմբի երկօքսիդինը՝ 0.006մգ/մ³, ազոտի երկօքսիդինը՝ 0.023մգ/մ³ և ածխածնի երկօքսիդինը՝ 0.8մգ/մ³:

4.7 Ջրային ռեսուրսներ

Տարածաշրջանի հիմնական ջրային արտերիան Ողջի գետն է, իր մշտական և ժամանակավոր վտակներով: Ողջի գետը Արաքս գետի ձախափնյա վտակն է և համարվում է իր մեծությամբ Ջանգեզուրի երկրորդ գետը, Որոտանից հետո:

Ողջի գետը սկիզբ է առնում Կապուտջուղ հարավարևելյան լանջից 3650մ բարձրության վրա, Կապուտջուղ և Քաջարան գետերի միացումից և թափվում է Արաքս գետ ձախ ափից 350մ բարձրության վրա: Ողջի գետի ավազանին բնորոշ է ապարների թույլ ջրանցիկություն, այդ իսկ պատճառով մթնոլորտային տեղումները բերում են մակերևութային հոսքի առաջացմանը, ինչի արդյունքում գետի ավազանը ունի զարգացած ջրագրական ցանց:

Ողջին տիպիկ լեռնային գետ է, նեղ ոլորապտույտ հունով, հոսքի մեծ արագությամբ և բազմաթիվ մանր վտակներով, որոնք իրենցից ներկայացնում են լեռնային առվակներ: Իր ճանապարհին Ողջի գետն ընդունում է մի շարք վտակներ՝ Սակքար, Մյական, Բաղաճաջուր, Դավազամի, Փխրուտ, Գեղի, Գիրաթաղ, Վաչագան, Արծվանիկ, Նորաշենիկ և այլն: Ողջի գետի խոշոր վտակներն են Գեղին և Նորաշենիկը, մյուս վտակները փոքր են՝ աննշան հոսքերով: Ողջի գետ են թափվում նաև ժամանակավոր ջրահոսք ունեցող զգալի քանակի վտակներ, որոնք պարբերաբար բերում են իրենց հետ սելավային բնույթի ջրաքարային հոսքեր: Գետի սնուցումը խառն է, տեղի է ունենում մթնոլորտային տեղումների, հալվող և գրունտային ջրերի հաշվին, սակայն գերակշռում է հալոցքային սնուցումը:

Ստորև ներկայացվում են Ողջի գետի մի շարք բնութագրեր (համաձայն Հարավային ջրավազանային կառավարման տարածքի 2025-2030 թվականների պլանի նախագծի ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվության):

Գետի ընդհանուր երկարությունը ՀՀ տարածքում՝ 52 կմ, իսկ ջրհավաք ավազանի մակերեսը՝ ՀՀ տարածքում՝ 1240.47 կմ²:

Աղյուսակ 23.

Ողջի գետի ընդհանուր ձևաչափական բնութագրերը

Մայր գետը	Ակունքի նիշը, մ	Գետաբերանի նիշը, մ	Երկարությունը, կմ	Միջին թեքությունը, ‰	Ջրհավաք ավազանի մակերեսը, կմ ²
Արաքս	3650	640*	52.0*	58	1240.3*

* ՀՀ տարածքում

Աղյուսակ 24.

Ողջի-Կապան հիդրոլոգիական դիտակետի ջրհավաք ավազանի հիմնական ձևաչափական բնութագրիչները

Ջրհավաք ավազանի մակերեսը, կմ ²	Միջին բարձրությունը, մ	Միջին թեքությունը, ‰	Անտառածածկույթը, %
710	2380	476	18

Աղյուսակ 25.

Գետային բնական հոսքի ներտարեկան բաշխվածությունը (Ողջի - ք. Կապան դիտակետում), մ³/վ

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
2.73	2.95	5.15	15.35	29.96	28.54	15.47	6.69	4.37	4.10	3.51	2.99

Աղյուսակ 26.


Բազմամյա միջին տարեկան բնական հոսքի հիմնական բնութագրերը
Ողջի - ք. Կապան հիդրոլոգիական դիտակետերում

Ջրհավաք ավազանի մակերեսը, կմ ²	Գետային հոսքի					
	մոդուլը լ/վրկ կմ ²	միջին տարեկան էլքը, մ ³ /վրկ	հոսքի ծավալը, մլն. մ ³	սեզոնային բաշխումը, %		
				III-VI	VII-X	XI-II
710	14.4	10.2	321.7	62	31	8

Գետի սնման աղբյուրները (Ողջի - ք. Կապան դիտակետում),
%

Ջրհավաք ավազանի մակերեսը, կմ ²	Սնման աղբյուրները		
	հալոցքային	անձրևային	ստորերկրյա
710	56	13	31

ՀՀ ՇՄՆ «Հիդրոոգերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվում է Ողջի գետի ջրերի որակի մոնիթորինգ: Գետի մոնիթորինգի դիտացանցը ներկայացված է ստորև, նկար 15-ում: Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքին մոտ գտնվում է N°94 դիտակետը (0.5 կմ Կապանի օդանավակայանից ներքև, աշխարհագրական կոորդինատները՝ լայնության 39.20059, երկայնության 46.46380):



Նկար 15.

2023-2025թթ.-ին նշված դիտակետում ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Ողջի գետի ջրերի որակի մոնիթորինգ չի կատարվել: 2022 թվականի 4-րդ եռամսյակի դիտարկումների տվյալներ համաձայն՝ Ողջի գետի ջրի որակը 0.5կմ Կապանի օդանավակայանից ներքև հատվածում գնահատվել է վատ (5-րդ դաս)՝ կապված նիտրիտ իոնի, բարիումի, ՇԱԱ, պղնձի, վանադիումի, ալյումինի, սուլֆատ իոնի, ամոնիում իոնի, մանգանի, կոբալտի և երկաթի կոնցենտրացիաների հետ (<http://env.am/storage/files/iv-2022.pdf>):

Ավագակոպճային խառնուրդի երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող Սյունիքի երևակման տարածքը գտնվում է Ողջի գետի հունից 100-164մ հեռավորությունների վրա (նկար 16):

Համաձայն Հարավային ջրավազանային կառավարման տարածքի 2025-2030 թվականների պլանի նախագծի ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվության 3.2.3. «Ստորերկրյա ջրային ռեսուրսները» բաժնի տեղեկատվության՝ երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքում՝ Սյունիք, Սգնակ բնակավայրերի շրջանում խոշոր աղբյուրներ և քահրիզներ չկան:


Ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները հաստատվել են միայն Որոտանի գետավազանում 1968թ.-ին 429մլն.մ³/տարի քանակությամբ: Ողջիի գետավազանում ստորերկրյա ջրերի շահագործական պաշարներ հաստատված չեն:

Հաշվի առնելով ուսումնասիրության նպատակով հայցվող տեղամասի երկրաբանական կառուցվածքը (կազմված է վերին չորրորդական-ժամանակակից փուլ-բեկորային բերվածքային առաջացումներով) և տեղադրվածությունը (Ողջի գետի հունից 100-164մ հեռավորության վրա)՝ փորվածքների անցման ժամանակ հնարավոր է ԱԿԽ զանգվածի խոնավեցում/ջրակալում գետնաջրերի կապիլյար ներծծման հաշվին:

Ի Ր Ա Վ Ի Ճ Ա Կ Ա Յ Ի Ն Հ Ա Տ Ա Կ Ա Գ Ի Մ

Մասշտաբ 1 : 500

Կոորդինատային համակարգը՝ WGS-84 (ARMREF 02)



Պ Ա Յ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ն Շ Ա Ն Ն Ե Ր



Երկրաբանահետախուզական աշխատանքների տարածք
(Սյունիքի ԱԿՆ երևակում)



Կատարող

Որակավորման վկայականի

N 37
(Համարը)

տրված

Գրգոր Զաքարյան 12. հունիս. 2025
(Անուն, ազգանուն) (Ամսի, ամսաթիվ)

20. հունիս. 2025թ.

Նկար 16.

4.8 Հողային ռեսուրսներ

Մյուսիքի երևակման շրջանում զարգացած են լեռնային ճմակաբեռնատային և դարչնագույն անտառային հողերը (հողերի բնական տիպերի բաշխվածությունը բերված է նկար 17-ում):

Լեռնային ճմակաբեռնատային հողերը ձևավորվել են կարբոնատային մայրատեսակների վրա: Հանքերևակման տարածքում զարգացած է ճմակաբեռնատային հողերի տիպիկ ենթատիպը: Այս հողերը պարունակում են մեծ քանակությամբ հումուս (վերին հորիզոններում՝ մինչև 11.8-13.4%), ունեն կլանման մեծ տարողություն՝ 35.5-43.0մ/էկվ 100գ հողում: Կլանման կատիոնների կազմում գերակշռող մասը (96-99%) Ca և Mg է, իսկ H-ը աննշան է (0.8-1.4մ.էկվ/100գ հողում):


Ճմակաբեռնատային հողերի մեխանիկական կազմը հիմնականում կավավազային և կավային է, հզորությունը տատանվում է 30-ից 70սմ սահմաններում:

Տիպիկ ճմակաբեռնատային հողերում կարբոնատները հայտնաբերվել են անմիջապես մակերեսում՝ հումուսակուտակիչ հորիզոնի սահմաններում:

Լեռնաանտառային գոտու դարչնագույն անտառային հողերը ձևավորվել են 700-1700մ բարձրությունների սահմաններում, կիրճերով, ձորակափոսորակային ցանցով խիստ կտրտված ռելիեֆի պայմաններում: Այս հողերը նկարագրվող շրջանում հանդես են գալիս լվացված, տիպիկ և կարբոնատային ենթատիպերով: Լվացված դարչնագույն անտառային հողերը զբաղեցնում են ստվերահայց լանջերը և ձևավորվել են համեմատաբար ավելի խոնավ պայմաններում, քան տիպիկ ենթատիպը: Հողերը բնութագրվում են դարչնագույն և մուգ-դարչնագույն գույնով, հումուսի բավական բարձր պարունակությամբ (10-14%), որը խորության ուղղությամբ արագ նվազում է: Հումինային նյութերում հումինաթթուների և ֆուլվոթթուների քանակը գրեթե հավասար է:

Այս տիպի հողերը ունեն գլխավորապես կավավազային մեխանիկական կազմ: Կլանման տարողությունը բարձր է, կլանված կատիոններում գերակշռողը Ca-ն է: Ռեակցիան չեզոք է կամ թույլ հիմնային: Բնութագրվում են բարելավ ֆիզիկական և ջրաֆիզիկական հատկություններով, լավ արտահայտված ստրուկտուրայով:

Նախնական դաշտային դիտարկումների տվյալներով՝ երևակման օգտակար հանածոն ծածկված է 0.2-0.3մ (միջինը 0.25մ) հզորությամբ դարչնագույն անտառային կավավազային հողմահարված հողերի շերտով:



- ① Ծնակակարրոնատային տիպիկ կավային-մերգելային մեծամասամբ փոքր հզորության
- ② Դարչնագույն անտառային լվացված կավայնացված մեծամասամբ միջին հզորության
- ③ Դարչնագույն անտառային լվացված մանրախճաքաքարոտ կավայնացված փոքր հզորության կավավազային տեղ-տեղ թույլ հողմահարված
- ④ Դարչնագույն անտառային լվացված տափաստանացված մեծամասամբ միջին հզորության կավային թույլ հողմահարված
- ⑤ Դարչնագույն անտառային լվացված տափաստանացված փոքր հզորության մեծամասամբ կավային միջին և ուժեղ հողմահարված
- ⑥ Դարչնագույն անտառային կարբոնատային մանրախճաքաքարոտ մեծամասամբ փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված
- ⑦ Դարչնագույն անտառային կարբոնատային տափաստանացված մեծամասամբ փոքր հզորության կավավազային
- ⑧ Դարչնագույն անտառային կարբոնատային տափաստանացված մեծամասամբ միջին հզորության կավային մշակովի
- ⑨ Դարչնագույն անտառային կարբոնատային տափաստանացված փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված մշակովի
- ⑩ Դարչնագույն անտառային մնացորդային-կարբոնատային տափաստանացված մեծամասամբ միջին հզորության կավային թույլ հողմահարված
- ⑪ Դարչնագույն անտառային մնացորդային-կարբոնատային տափաստանացված փոքր հզորության կավավազային միջին տեղ-տեղ ուժեղ հողմահարված
- ⑫ Դարչնագույն անտառային մնացորդային-կարբոնատային տափաստանացված մեծամասամբ հզոր կավային մշակովի
- ⑬ Դարչնագույն անտառային մնացորդային-կարբոնատային տափաստանացված մեծամասամբ հզոր կավային մշակովի
- ⑭ Դարչնագույն անտառային մնացորդային-կարբոնատային տափաստանացված փոքր հզորության կավավազային մեծամասամբ միջին հողմահարված մշակովի
- ⑮ Արմատական ապարների ելքերի և թերի զարգացած ուժեղ քարքարոտ հողերի համալիր

Նկար 17.

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքի հողային ծածկույթից 2025 թվականի ապրիլին վերցվել է 2կգ քաշով, որը ներկայացվել է ՀՀ ՇՄՆ Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ՝ լաբորատոր փորձարկման, ֆոնային աղտոտվածության ուսումնասիրության նպատակով: Փորձարկման ցուցանիշների, մեթոդների և արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացված է աղյուսակ 28-ում:

ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ № 072_2025

h.h.	Փորձարկված ցուցանիշի անվանումը	Փորձարկման մեթոդը	Չափման միավորը	Փորձարկման արդյունքը
1.	Ալյումին	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	55934
2.	Սիլիցիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	160018
3.	Ֆոսֆոր	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	1085
4.	Ծծումբ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	1432
5.	Քլոր	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	1979
6.	Կալիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	14506
7.	Կալցիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	28517
8.	Տիտան	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	5284
9.	Վանադիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	29
10.	Քրոմ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	56
11.	Մանգան	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	1073
12.	Երկաթ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	54028
13.	Նիկել	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	41
14.	Պղինձ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	352
15.	Ցինկ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	196
16.	Արսեն	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	45
17.	Սելեն	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<5
18.	Ռուբիդիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	62
19.	Ստրոնցիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	418
20.	Իտրիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	27
21.	Ցիրկոնիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	171
22.	Նիոբիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	11
23.	Մոլիբդեն	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	17
24.	Արծաթ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<5
25.	Կադմիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<5
26.	Անագ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<5
27.	Ծարիր	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<5
28.	Վոլֆրամ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	18
29.	Սնդիկ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<5
30.	Կապար	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	26
31.	Բիսմութ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<5
32.	Թորիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	10
33.	pH	ՀՍ իՍՕ 10390-2012	-	8.68
34.	Էլեկտրական հաղորդականություն	ԻՍՕ 11265:1994	մկՄ/սմ	128.3
35.	Խոնավություն	ԻՍՕ 11461:2001	%	5.16

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքի հողերը հաշվառված են 09-082-0549-0008 ծածկագրով որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողեր և սեփականության իրավունքով պատկանում են «Կապանի ՃՇՀ» ՍՊԸ տնօրեն Ա. Կարապետյանին (կից ներկայացվում է):



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 6 մարտի 2007 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ԱՐԱՐԱՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԵՐՅՈՒՄՅԻ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Սյունիք, համայնք Կապան գյուղ Սյունիք հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Պայմանագիր հողամասի առուվաճառքի մասին 08/02/2007թ. ս/մ 483

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 09-082-0549-0008

Մակերեսի չափը (հա)՝ 2.11

Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Վարելահող

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 31072024-09-0029, գաղտնաբառ՝ SYUYPPUQXEYVW

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 1/2

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գույքի գրանցման իրական ամսաթիվն է 06/03/2007թ.

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Մերի Դավթյան
Զբաղեցրած պաշտոնը՝ Սյունիքի մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 31072024-09-0029, գաղտնաբառ՝ SVUVPPUQXEYVW

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2



Կադաստրի
կոմիտե

Մինչև նախատեսվող գործունեության իրականացնելը՝ հայցվող տարածքում աշխատանքներ չեն կատարվել, տեղամասում վերականգնված հողեր, լցակույտեր, հանված, պահեստավորված, պահպանված հողաբուսական շերտ չկա:

4.9 Կենսաբազմազանություն

Սյունիքի ԱԿԽ տարածքը բուսաաշխարհագրական տեսակետից պատկանում են Բորեալ ֆլորիստիկ ենթաթագավորության Ցիրկումբորեալ գավառի Կովկասյան ենթագավառի Զանգեզուրի ֆլորիստիկ շրջանին: Շրջանի բուսականությունը ունի արտահայտված քսերո-մեզոֆիլ և մեզո-քսերոֆիլ բնույթ՝ յուրահատուկ են տափաստանները, տերևավոր նոսրանտառային անտառները, թփուտները, ինչպես նաև գետամերձ բուսականությունը:

Տափաստանային խոտածածկույթը ներկայացված է բոտրիխլոա սովորական (Bothriochloa ischaemum), անխասնո տանիքային (Anusantha tectorum), գեղազլիկ փայլուն (Callicephalus nitens), անմեռուկ չոված (Xeranthemum squarrosum), խատուտիկ սովորականը (Taraxacum officinale), իժախոտ իտալականը (Echium italicum), եղինջ երկտուն (Urtica dioica), հազարատերևուկ սովորական (Achilea millefolium), կատվալեզու եռաբաժան (Bidens tripartita), սիբեխ սովորական (Falcaria vulgaris), փիփերթ արհամարված (Malva neglecta) տեսակներով: Ողջի գետի և նրա վտակների ափերի ջրային և մերձափնյա բուսականությանը ներկայացված է ձիաձետի երկու տեսակ՝ Equisetum telmateja և E.Fluvatile, կեռոն Լաքսմանի Typha laxmannii, փափկամազ ջրային՝ Myosoton aquaticum, արենաղոտ ուռատերև՝ Lythrum saicaria և այլն:

Բուն երևակման տարածքում բնական բուսածածկը ամբողջությամբ վերափոխված է, տարածքը երկար ժամանակ օգտագործվում է գյուղատնտեսական նպատակներով, մի հատվածը զբաղեցված է պտղատու ծառերով և առաջնային, բնական բուսական տիպեր չեն պահպանվել:

Ողջի գետի հովտում աճում են կաղնու երեք հիմնական տեսակներ: Դրանցից կաղնի արաքսյանը զբաղեցնում է ստորին բարձրություններից մինչև ծ.մ. մոտ 1000մ բարձրությունները: Կաղնի վրացականը զբաղեցնում է մոտ 1000-1500 (1550)մ բարձրությունները, իսկ կաղնի արևելյանը (կամ խոշորառեջը) զբաղեցնում է մոտ (1450) 1500-2400մ բարձրությունները: Բացի կաղնուց, բնափայտավոր բուսատեսակները արտահայտված են կովկասյան և արևելյան բոխիների (Carpinus betulus, Carpinus orientalis), կովկասյան տանձենու (Pyrus caucasica), հացենու (Fraxinus excelsior, Fraxinus oxycarpa), թեղու (Ulmus minor), վրացական թխկու (Acer ibericum), շլորենու (Prunus divaricata), տխլենու (Corylus avellana), հոնի (Cornus mas), ուռենու (Salix excelsa, Salix

triandra), սրնգենու (*Ligustrum vulgare*), դրախտածառի (*Cotinus coggygria*), վրացական ցախակեռասի (*Lonicera iberica*), Պալլասի դժնիկի (*Rhamnus pallasii*), սզնու (*Crataegus sp.*), մասրենու (*Rosa sp.*), մոշենու (*Rubus sp.*) տեսակների և այլ ծառերով ու թփերով : Երևական շրջանում անտառային հողերի տեղաբաշխումը ներկայացված է նկար 18-ում:



Նկար 18.

Երևական շրջանի անտառային հողերը ներառված են Կապանի անտառոտնտեսության Սյունիքի անտառապետության կազմում (նկար 19):

Ուժանիս, Սյունիք, Կաղնուտ համայնքների նախկին սովխոզային տնօրինության անտառներից: Անառպետության կազմում ներկայացված են պաշտպանական (85.6%) և արտադրական (14.4%) նշանակության անտառներ, որոնց բնութագրիչները ներկայացված են աղյուսակ 29-ում :

Աղյուսակ 29.

Անտառ- պետությունը	Անտառի կատեգորիան	Տարիքը	Բնիկտե ղաթը	Շրջան Լրիվությունը	Ծառուտի միջին կազմը
Սյունիք	Պաշտպա- նական	68	3.5	0.58	5.0 բոխի 4.7 կաղնի 0.2 թխկի 0.1 հացի
	Արտադ- րական	58	4.2	0.48	4.7 բոխի 4.7 կաղնի 0.4 թխկի 0.2 հացի
	ընդամենը	60	4.1	0.49	4.7 կաղնի 4.7 բոխի 0.4 թխկի 0.2 հացի

Երևակման տարածքում, դրանից 500մ շառավղող գտնվող հարակից տարածքներում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներ չկան (հիմք՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության 2025թ.-ի №2/16.11/4305 գրություն):

Սյունիքի ԱԿԽ երևակման շրջանում գնայուկ բզեզներից արձանագրվել է *Harpalus affinis*, *Amara similata*, լողաբզեզներից՝ *Platambus lunulatus*, լեշակերներից՝ *Silpha obscura*, ոսկեբզեզներից՝ *Coraebus elatus*, զատիկներից՝ *Coccinella septempunctata*, փղիկներից՝ *Hypera variabilis*: Երևակման տարածքում նշվել են կանաչ դոդոշ (*Bufo viridis*), ջրային լորսու (*Natrix tessellata*), թռչուններից՝ ափամերձ ծիծեռնակ (*Riparia riparia*), սև կեռնեխ (*Turdus merula*) և սև ագռավ (*Corvus corax*), կաթնասուններից՝ հասարակական դաշտամուկ (*Microtus socialis*):

Ողջի գետի և դրա վտակների վերին հոսանքներում հայտնի են *Barbus lacerta cyri*, *Alburnoides bipunctatus*, *Varicorhinus capoeta*: Հանդիպում են նաև գետային կրաբեր:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքում ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակների առկայության հավանականությունը պարզելու նպատակով կատարվել է կենդանիների Կարմիր գրքի

տվյալների վերլուծություն, առանձնացվել է տարածքում հայտնի տեսակների վերաբերյալ տեղեկատվությունը :

Ըստ ՀՀ կենդանիների կարմիր գրքի տվյալների՝ Կապանի շրջակայքում, անտառներում, հետանտառային էկոհամակարգերում, 1100-2200մ բարձրությունների վրա հանդիպում է Ֆալետիի կողնջակեր ցայտագնայուկ (*Procerus scabrosus fallettianus Cavazzutti*) – փոքր արեալով հազվադեպ ենթատեսակ է: Ցայտագնայուկը պահպանվում է «Շիկահող» պետական արգելոցում, «Արևիկ» ազգային պարկում և «Զանգեզուր» պետական արգելավայրում: Համանման տեղեկատվություն ներկայացվել է նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարության 2025թ.-ի №2/16.11/4305 գրությամբ, համաձայն ինչի «Ֆալետիի կողնջակեր ցայտագնայուկ» բզեզը հանդիպում է Սյունիքի երևակման մոտակայքում: Սակայն երևակման հայցվող տարածքի ֆիզիկաաշխարհագրական պայմանները խիստ տարբերվում են Ֆալետիի կողնջակեր ցայտագնայուկ (*Procerus scabrosus fallettianus Cavazzutti*) տեսակի ապրելավայրերին բնորոշ պայմաններից, քանի որ գտնվում է նվազագույնը 500-ից 1500մ ավելի ցածր հիպսոմետրիկ նիշերում, երևակման տարածքում զարգացած են տափաստանային բուսատեսակներ, այտեղ չկա անտառային բուսականություն:

2025 թվականի ապրիլին՝ երևակման տարածքի նախնական դիտարկման ժամանակ առանձնահատուկ ուշադրություն է դարձվել Ֆալետիի կողնջակեր ցայտագնայուկ տեսակի հայտնաբերմանը: Այդ նպատակով կիրառվել են միջատաբանական հետազոտությունների ավանդական մեթոդները, հիմնականում ձեռքի հավաք, դիտարկվել են երևակման տարածքի բույսերի ծաղկած հատվածները, տերևները, ցողուններն ու արմատամերձ հողային հատվածը: Ուսումնասիրվել են նաև տեղամասի տարածքում գրանցված չորացած տերևներն ու ճյուղերը, քարակույտերը: Նախապես քանդված փոսիկներում միջատների որսման համար տեղադրվել են թակարդներ՝ պլաստիկ բաժակներ, որոնց դիտարկվել են յուրաքանչյուր օր, երեկոյան:

Ուսումնասիրությունների արդյունքներով Սյունիքի երևակման տարածքում Ֆալետիի կողնջակեր ցայտագնայուկ (*Procerus scabrosus fallettianus Cavazzutti*) տեսակը չի արձանագրվել:

4.10 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Սյունիքի ավազակոպճային խառնուրդի երևակման տարածքը ներառված չէ որևէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում:

Հայցվող տարածքից մոտ 10կմ հեռավորության վրա է գտնվում «Զանգեզուր» կենսոլորտային համալիրի «Շիկահող» պետական արգելոցը, մոտ 25կմ հեռավորության վրա՝ «Զանգեզուր» կենսոլորտային համալիրի «Արևիք» ազգային պարկը և մոտ 22կմ հեռավորության վրա՝ Զանգեզուր» կենսոլորտային համալիրի «Զանգեզուր» պետական արգելավայրը:

Կենսոլորտային համալիրը ստեղծվել է ՀՀ կառավարության 19.12.2013թ.-ի N 1465-Ն որոշմամբ «Արևիկ» ազգային պարկի, «Շիկահող» պետական արգելոցի, «Սոսու պուրակ», «Զանգեզուր», «Խուստուփ», «Բողաքար» և «Սև լիճ» պետական արգելավայրերի տարածքների բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, հաշվառման, գույքագրման, դիտանցի, բնության տարեգրության վարման ապահովումը, ինչպես նաև ազգային պարկի, արգելոցի և արգելավայրերի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովման նպատակով:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ են նաև բնության հուշարձանները, որոնց ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ: ՀՀ Սյունիքի մարզում հաշվառված բնության հուշարձանների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 30-ում:

Աղյուսակ 30.

Հուշարձանի անվանումը	Գտնվելու վայրը
1	2
«Սատանա» բնական քանդակ	Սյունիքի մարզ, Գորիս քաղաքից մոտ 1,0 կմ հս-արլ, Գորիս-Ստեփանակերտ խճուղու ձախ կողմում
«Անանուն» ժայռ-մնացուկներ	Սյունիքի մարզ, Գորիս քաղաքի շրջակայքում
«Անանուն» ռելիեֆի փոքր ձևեր	Սյունիքի մարզ, Սիսիան քաղաքի հս-արլ եզրին
«Անանուն» ռելիեֆի փոքր ձևեր	Սյունիքի մարզ, Քաջարանի հանքային ջրի աղբյուրից հս-արլ, Ողջի գետի ձախ ափին
«Մալնի ինտրուզիա» ներժայթուկ	Սյունիքի մարզ, Մեղրիի ենթատարածք, Ալվանք գյուղից մոտ 1-1,5 կմ հս, լքված Մալն գյուղի մոտ

1	2
«Անանուն» ապարների մերկացումներ	Սյունիքի մարզ, Երևան-Սիսիան խճուղու 180-181 կմ-ի ձախ և աջ կողմերում
«Խորձոր» V-աձև կիրճ	Սյունիքի մարզ, Խնածախ գյուղից 1.5-2.0 կմ հս-արլ
«Անանուն» երոզիոն ռելիեֆ	Սյունիքի մարզ, Խնածախ գյուղից 2,5 կմ հս-արլ, Բերձոր տանող ճանապարհի ձախ կողմում
«Անանուն» սյունաձև բազալտներ	Սյունիքի մարզ, Հալիձոր գյուղից 2 կմ արմ, Որոտանի կիրճում
«Անանուն» ապլիտային դայկաներ	Սյունիքի մարզ, Կապան քաղաքից 30-35 կմ հվ
«Հերթ» որմնաքանդակ	Սյունիքի մարզ, Սիսիան քաղաքից 3 կմ հս-արմ, «Շաքի» ջրվեժի մոտ
«Փղի ձտեր» որմնաքանդակ	Սյունիքի մարզ, Կապան քաղաքից մոտ 25 կմ հվ, «Շիկահող» պետարգելոց տանող ճանապարհին
«Անանուն» սյունաձև բազալտներ	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հվ-արմ եզրին
«Անանուն» սյունաձև բազալտներ	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հվ-արմ եզրին
«Շիշբար» (Բաղաքար) դայկա	Սյունիքի մարզ, Բաղաքար գետի աջ և ձախ կողմերում
«Անանուն» բուրգանման մնացուկներ	Սյունիքի մարզ, Վերիշեն գյուղից 2 կմ հս, Գորիս-Խոզնավար ճանապարհի ձախ կողմում
«Սատանի կամուրջ» կամուրջ	Սյունիքի մարզ, Տաթև գյուղից 2,5 կմ հս-արլ
«Բնական թունել»	Սյունիքի մարզ, Քարահունջ գյուղի մոտ, Գորիս-Կապան խճուղու վրա
«Ագարակի» բրածո ֆլորա	Սյունիքի մարզ, Ագարակ քաղաք
«Շամբի» բրածո ֆլորա և ֆաունա	Սյունիքի մարզ, Շամբ գյուղից 500 մ հս-արմ, Որոտան գետի ձախ ափին, 1300 մ բարձրության վրա
«Ծաղկարի» լիճ	Սյունիքի մարզ, Զանգեզուրի լեռնաշղթայի կատարային հատվածում, Ծաղկարի գետի վերնամասում, Քաջարան քաղաքից մոտ 10 կմ հվ-արմ, ծ.մ-ից 3271,5 մ բարձրության վրա
«Կապուտան» (Գոգի) լիճ	Սյունիքի մարզ, Քաջարան գետի ակունքներում, Քաջարան քաղաքից մոտ 5-6 կմ հվ-արմ, ծ.մ-ից 3202 մ բարձրության վրա
«Անտակ» լիճ	Սյունիքի մարզ, Բոնակոթ գյուղի Զարդով ջրամբարից 1 կմ հս-արմ
«Գազանա» լիճ	Սյունիքի մարզ, Գեղի գյուղի ակունքներում, Գեղի գյուղից մոտ 9 կմ հս-արլ, ծ.մ-ից 3111,8 մ բարձրության վրա
«Կապույտ» լիճ	Սյունիքի մարզ, Մեղրի գետի ակունքներում, Լիճք գյուղից մոտ 8 կմ հս-արմ
«Բերդալիճ» լիճ	Սյունիքի մարզ, Ծղուկ գյուղից 13 կմ հս-արլ, ծ.մ-ից 3005, 7 մ բարձրության վրա

1	2
«Կապուտջուղ» ջրվեժներ	Սյունիքի մարզ, Քաջարան քաղաքից 3.0 կմ արմ, Կապուտջուղ գետակի վրա
«Շինուհայր» ջրվեժ	Սյունիքի մարզ, Որոտան գետի ձախ կողմում, Հին Շինուհայրից 0.5 կմ հս-արմ
«Աղվան» ջրվեժ	Սյունիքի մարզ, Մեղրի գետի ձախ վտակ Մալն գետակի, լքված Մալն գյուղից 2.0 կմ հվ-արլ
«Վարդանիձոր» ջրվեժ	Սյունիքի մարզ, Վարդանիձոր գյուղից 2.5 կմ հս-արմ, Բերդաքար գետի Վարդանիձոր վտակի վրա
«Աջիբաջ» ջրվեժ	Սյունիքի մարզ, Գեղի գետի ձախակողմյան Աջիբաջ վտակի վրա, համանուն գյուղից 4 կմ հս-արմ
«Շաքի» ջրվեժ	Սյունիքի մարզ, Որոտան գետի ձախակողմյան Շաքի վտակի վրա
«Պառավաձոր» ջրվեժ	Սյունիքի մարզ, Բերդաքար գետի ձախակողմյան վտակի վրա, Վարդանիձոր գյուղից 3 կմ հս-արմ
Սբ. Վարդան եկեղեցու քարայր կացարանի և աղբյուրի համալիր	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից 0.5 կմ արմ, Անգեղակոթ-Շաղաթ ճանապարհից աջ
Արծվանիկ գյուղի բնական քարանձավներ	Սյունիքի մարզ, Արծվանիկ գյուղից 3 կմ հվ, Երիցավանքի շրջակայքում
«Որոտան» բնապատմական համալիր	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հվ-արմ եզրին աջ ու ձախ ափերին
Հին Գորիսի («Կյորես») հրաբխային ապարներ	Սյունիքի մարզ, Գորիս քաղաքի արլ մասում, Վարարակ գետի ձախ ափին
«Մեղրիի սոսի»	Սյունիքի մարզ, քաղ. Մեղրի
«Շիրլյակ»	Սյունիքի մարզ, Կապան քաղաք, Առաջաձոր տեղամասում, 800-900 մ բարձրության վրա
«Սֆազնումային մամուռներ»	Սյունիքի մարզ, Գոռայք գյուղից 5-6 կմ հս, Որոտանի լեռնանցքի մոտ
«Ջրաղացի» աղբյուրներ	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղի հվ-արմ մասում, ծ.մ-ից 1770 մ բարձրության վրա
«Ծործոր» աղբյուրներ	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից 4 կմ հեռավորության վրա, Ծործոր գետի աջ ափին, ծ.մ-ից 1650 մ բարձրության վրա
«Վարդանաձորի» աղբյուրներ	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից 17 կմ հվ-արմ, Սիսիան-Նախիջևան ավտոճանապարհից 160 մ ներքև
«Սմբուլի» աղբյուր	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից հվ-արլ մասում, ծ.մ-ից 1740 մ բարձրության վրա
«Անապատի» աղբյուր	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղի հարավային ծայրամասում, ծ.մ-ից 1840 մ բարձրության վրա

1	2
«Ջրաղացի» աղբյուր	Սյունիքի մարզ, Բարձրավան գյուղից 0.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա
«Սևջուր» աղբյուր	Սյունիքի մարզ, Գեղի գյուղի հս ծայրամասում, Գեղի գետի ձախ ափին
«Արքայից» աղբյուր	Սյունիքի մարզ, Դավիթ Բեկ գյուղի հս ծայրամասում, Քաշունի գետի կիրճի աջ ափին, ջրաղացի և կամրջի միջև, ծ.մ-ից 1065 մ բարձրության վրա
«Քյահրիզ» աղբյուր	Սյունիքի մարզ, Նոնաձոր գյուղից 1.5 կմ հս-արլ, ծ.մ-ից 670 մ բարձրության վրա
«Անանուն» աղբյուր	Սյունիքի մարզ, Շաքի գյուղի հս-արմ ծայրամասում, ծ.մ-ից 1685 մ բարձրության վրա
«Մեծ Նավի» աղբյուր	Սյունիքի մարզ, Շինուհայր գյուղից 0.5 կմ հս-արմ, ճամփեզրին, խաչքարի մոտ
«Որոտան» աղբյուր	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հս ծայրամասում
«Կաթնաղբյուր» աղբյուր	Սյունիքի մարզ, Տանձավեր գյուղի հվ-արմ ծայրամասում, անտառի եզրին, Քաշունի գետի աջ ափին, ծ.մ-ից 1570 մ բարձրության վրա
«Սպիտակջուր» աղբյուր	Սյունիքի մարզ, Տանձատափ գյուղից 1.4 կմ հվ, անանուն գետակի ձախ ափին, ծ.մ-ից 1480 մ բարձրության վրա
«Շոան» աղբյուր	Սյունիքի մարզ, Քաշունի գյուղից 1.2 կմ հվ-արլ, ծ.մ-ից 1930 մ բարձրության վրա
«Ներքին» աղբյուր	Սյունիքի մարզ, Քարահունջ գյուղի հվ մասում, սողանքի մարմնի աջ կողմում, ծ.մ-ից 1250 մ բարձրության վրա

Երևակման տարածքում, ինչպես նաև մոտակա Սյունիք գյուղի տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն, այդ մասին նշվում է նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարության 2025թ.-ի №2/16.11/4305 գրության մեջ:

4.11. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով՝ գնահատման և փորձաքննության գործընթացում դիտարկվող օբյեկտների թվին են պատկանում պատմության և մշակույթի հուշարձանները: ՀՀ Սյունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատվել է

ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2322-Ն և 2007 թվականի մարտի 15-ի թիվ 385-Ն որոշումներով:

Սյունիք բնակավայրի տարածքում հաշվառված են հետևյալ պատմության և մշակութային հուշարձանները.

Աղյուսակ 31.

Հուշարձանը	Ժամանակաշրջանը	Գտնվելու վայրը
Դամբարանադաշտ	Ք.ա. 1 հազ.	գյուղից մոտ 2 կմ հարավ-արևելք, Կերեն տանող ճանապարհին
Ջրաղաց	20-րդ դար	Գյուղի արևմտյան եզրին

Պատմամշակութային հուշարձանները գտնվում են Սյունիքի երևակման տարածքից 1.0-1.8կմ հեռավորությունների վրա:

2025 թվականի ապրիլին՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրին և ՇՄԱԳ հաշվետվության կազմմանը նախորդող դաշտային դիտարկումների ժամանակ, հայցվող տեղամասի սահմաններում ակնադիտական զննմամբ պատմամշակութային հուշարձաններ՝ վանքեր, եկեղեցիներ, ամրոցներ, խաչքարեր, մատուռներ, տապանաքարեր և այլն, չեն արձանագրվել:

4.12 Ազդակիր համայնքը

Ինչպես արդեն նշվել է, Սյունիքի ԱԿԽ երևակման տարածքը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Կապան խոշորացված համայնքի Սյունիք բնակավայրի տարածքում:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 3)-րդ մասի համաձայն 2017 թվականի նոյեմբերի 5-ին կայացած ՏԻՄ ընտրություններով Կապան համայնքը խոշորացվել է և այժմ ներառում է 39 բնակավայր (խոշորացման պահին եղել է 38 բնակավայր, Լրկենանց բնակավայրը Չափնի բնակավայրից առանձնացել է 2021 թվականին):

Համայնքի կազմի մեջ մտնում են 38 գյուղական բնակավայր (Ագարակ, Աղվանի, Աճանան, Անտառաշատ, Առաջածոր, Արծվանիկ, Գեղանուշ, Գոմարան, Դավիթ Բեկ, Սյունիք, Դիցմայրի, Բարգուշատ, Խորձոր, Սգնակ, Եղեգ, Եղվարդ, Խդրանց, Ծավ, Կաղնուտ, Ձորաստան, Ճակատեն, Ներքին Խոտանան, Ներքին Հանդ, Նորաշենիկ, Շիկահող, Շիշկերը, Շրվենանց, Չափնի, Լրկենանց, Սրաշեն, Սևաքար, Վանեք,

Վարդավանք, Վերին Խոտանան, Տանձավեր, Տավրուս, Ուժանիս, Օխտար) և Կապան քաղաքը: Կապան համայնքի տարածքը 79981.45 հա է (աղյուսակ 32):

Աղյուսակ 32.

Հ/Հ	Բնակավայրի անվանումը	Տարածքը, հա
1	2	3
1	Կապան	4863,89
2	Ագարակ	1850,65
3	Աղվանի	965,92
4	Աճանան	799,84
5	Անտառաշատ	2266,48
6	Առաջաձոր	1286,93
7	Արծվանիկ	2819,17
8	Գեղանուշ	7690,22
9	Դավիթ Բեկ	2001,73
10	Եղեգ	1630,99
11	Եղվարդ	1295,05
12	Խղրանց	696,74
13	Ծավ	12836,64
14	Կաղնուտ	1154,09
15	Ձորաստան	3330,73
16	Ճակատեն	5532,21
17	Ներքին Խոտանան	324,62
18	Ներքին Հանդ	6272,03
19	Նորաշենիկ	1027,5
20	Շիկահող	4313,96
21	Շրվենանց	514,35
22	Չափնի	1047,57
23	Սևաքար	1874,27
24	Սյունիք	2217,2
25	Սրաշեն	2122,13
26	Վանեք	1652,28
27	Վարդավանք	776,89
28	Վերին Խոտանան	2262,46
29	Տանձավեր	1677,81
30	Տավրուս	724,17
31	Ուժանիս	1433,6
32	Օխտար	719,33
Ընդամենը		79981,45

Աղյուսակ 32-ում ներկայացված է 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ Կապան համայնքի բնակչությունը ըստ բնակավայրերի (համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական տեղեկատվության):

Աղյուսակ 32.

Հ/Հ	Բնակավայրը	Բնակչությունը, մարդ
1	Կապան	33189
2	Ագարակ	189
3	Աղվանի	53
4	Աճանան	179
5	Անտառաշատ	102
6	Առաջածոր	94
7	Արծվանիկ	729
8	Բարգուշատ	40
9	Գեղանուշ	307
10	Գոմարան	43
11	Դավիթ Բեկ	742
12	Դիցմայրի	33
13	Եղեգ	64
14	Եղվարդ	322
15	Խդրանց	60
16	Խորձոր	---
17	Ծավ	329
18	Կաղնուտ	132
19	Ձորաստան	63
20	Ճակատեն	195

Հ/Հ	Բնակավայրը	Բնակչությունը, մարդ
21	Ներքին Խոտանան	115
22	Ներքին Հանդ	82
23	Նորաշենիկ	115
24	Շիկահող	245
25	Շիշկերտ	39
26	Շրվենանց	66
27	Չափնի	90
28	Սգնակ	87
29	Սյունիք	605
30	Սրաշեն	95
31	Սելքար	---
32	Վանեք	62
33	Վարդավանք	79
34	Վերին Խոտանան	232
35	Տանձավեր	199
36	Տավրուս	75
37	Ուժանիս	115
38	Օխտար	69
39	Ընկենանց	31

Համաձայն Կապան համայնքի հնգամյա զարգացման ծրագրի՝ բնակչության սոցիալական իրավիճակի նկարագիրը ներկայացված է աղյուսակ 33-ում:

Աղյուսակ 33.

Հ/Հ	Անվանումը	Ցուցանիշը /01.12.2021 դրությամբ/
1	Գրանցված գործազուրկներ (մարդ), որից /կին/	793/568
	- բարձրագույն կրթությամբ	77/59
	- միջին մասնագիտական կրթությամբ	254/219
	- նախնական մասնագիտական կրթությամբ	108/62
	- միջնակարգ կրթությամբ	281/197
	- հիմնական կրթությամբ	73/31
2	Ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված ընտանիքներ	932
	- որից նպաստառու	788
3	- Հաշմանդամներ, ընդամենը	3364/1668
	- 0-5 տարեկան հաշմանդամներ	8/5
	- 6-18 տարեկան հաշմանդամներ	106/34

Գյուղական բնակավայրերում մեծ է գյուղատնտեսության ոլորտում ինքնազբաղվածների թիվը:

Կապան քաղաքում գործում են սննդի 1 հանրային շուկա, հանրային սննդի 56 օբյեկտ, 8 սուպերմարկետ, ոգելից խմիչքի վաճառքով զբաղվող առևտրի 44 օբյեկտ, ծխախոտի արտադրանքի վաճառքով զբաղվող առևտրի 11 օբյեկտ, ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքով զբաղվող առևտրի 195 օբյեկտ, զվարճանքի 2 օբյեկտ, սգո 4 ծառայություն, ոսկու վաճառքի 11 օբյեկտ, տեխնիկական հեղուկների վաճառքի 20 կետ, գազի լիցքավորման 8 կետ, 10 բենզինի լցակայան:

Համայնքում գործում են նաև հաշվապահական, նոտարական, քաղաքաշինական, փաստաբանական, գրադարանային, թանգարանային, ապահովագրական, գազամատակարարման, ջրամատակարարման, էներգամատակարարման, կապի, տրանսպորտի, հյուրանոցառեստորանային, ավտոտեխսպասարկման, կենցաղային, տպագրական և այլ ծառայություններ:

Համայնքի հիմնական խոշոր ձեռնարկությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 34-ում:

Աղյուսակ 34.

Հ/Հ	Արտադրություն իրականացնող ձեռնարկություններ	Սպառման շուկա	Հիմնական արտադրանք
1	2	3	4
Արդյունաբերություն, ընդերքօգտագործում և այլն			
1	<<Կապանի լեռնահարստացման կոմբինատ>> ՓԲԸ		հանքաարդյունաբերություն
2	<<Վայքլ>> ՍՊԸ		Կրի արտադրություն
3	<<Կապանի ՃՇՇ>> ՍՊԸ		Ասֆալտի, ավազի, խճի արտադրություն
4	Կապանի <<Նորոզշին>> ՍՊԸ		Ասֆալտի արտադրություն
5	Վիկարտ ՍՊԸ		Ավազակոպճազլաքարային խառնուրդի արդյունահանում
6	Դեդալ ՍՊԸ		Մարմարացված կրաքարի արդյունահանում
Գյուղատնտեսություն			
1	<<Մարիլա>> ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	կաթնամթերքի և մսամթերքի արտադրություն
2	<<Վամաքս>> ՍՊԸ /Ֆերմա/	Հայաստանի Հանրապետություն	կաթնամթերքի և մսամթերքի արտադրություն
3	<<Պոռկպրոդ>> ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	մսի արտադրություն
4	<<Սյունիքի թռչնաֆաբրիկա>> ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	թռչնամսի արտադրություն
5	Ա/Ձ Էրիկ Թումանյան	Սյունիքի մարզ	Մսամթերքի արտադրություն
6	Ա/Ձ Արմինե Գրիգորյան	Սյունիքի մարզ	Կաթնամթերքի արտադրություն
7	<<Ագրո-Բիո պրոդուկտ>> ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	թռչնամսի, ալյուրի, կերի արտադրություն
8	<<Հայկ-Մարի>> ՍՊԸ	Հայաստանի Հանրապետություն	պահածոների արտադրություն

1	2	3	4
Այլ արտադրություններ			
1	<<Զանգեզուր հասկ>> ՍՊԸ	Կապան համայնք	Հացի և թարմ ալյուրե հրուշակեղենի արտադրություն
2	<<Ռուբիկ Իսրայելյան>> ՍՊԸ	Կապան համայնք	
3	<<Գեղեցիկ Քնար>> ՍՊԸ	Կապան համայնք	
4	<<Զառա սվիթ>>	Կապան համայնք	
5	<<Կապանի հաց>> ՍՊԸ	Կապան համայնք	
6	<<Առինգար>> ՍՊԸ	Կապան համայնք	
7	<<Պրոկոն>> ՍՊԸ /Սլադկոֆֆ խանութների ցանց/	Սյունիքի մարզ, քաղաք Երևան	
8	<<ՕՖ-ԷԼԻ>>	Կապան համայնք	
9	<<Գորշ Արջ>> ՍՊԸ	Սյունիքի մարզ	
10	Նորա Ավագյան /Ծավ գյուղ/	Կապան համայնք	
11	Դավիթ Ավագյան /Արծվանիկ գյուղ/	Կապան համայնք	

Համայնքում գործում են նաև արտահագուստի, կոշիկի, էլեկտրաէներգիայի, մետաղե կոնստրուկցիաների և դրանց մասերի, բետոնե հավաքովի շինարարական կոնստրուկցիաների, դռների և լուսամուտների, շինարարական պլաստմասսե արտադրատեսակների և այլ արտադրություններ:

Սյունիք բնակավայրի բնակելի տների թիվը կազմում է 98, որից՝ 81 առանձնատուն, 17 բազմաբնական շենք (քոթեջ, 101 բնակարան): Բնակավայրի բնակչության թիվը՝ 764 մարդ, որից 376՝ արական, 388՝ իգական սեռի, գրանցված գործազուրկների թիվը՝ 10 /կին՝ 5/:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բնույթը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է համայնքի բնակիչներին: Քննարկվել է աշխատատեղերի ստեղծման, ինչպես նաև ընկերության կողմից ազդակիր բնակավայրին սոցիալ-տնտեսական աջակցության հնարավոր ծրագրերի հարցը : 1-ին հանրային լսման արձանագրությունը և համայնքի ավագանու որոշումը ներկայացվում են հավելված 1-ում :

4.13 Այլընտրանքային տարբերակներ

Աշխատանքների իրականացման այլընտրանքային տարբերակներ ներկայացնել հնարավոր չէ, քանի որ ոչ մեծ ուսանողական կամ ոչ կանոնավոր տեսքի, օգտակար սովորաշերտի ոչ կայուն կառուցվածքով և փոփոխական հզորությամբ կամ ավագի ու կոպճի փոփոխական որակով հանքավայրերի հետախուզական աշխատանքների մեթոդաբանությունը՝ հետախուզական ցանցի խտությունը, նմուշարկման ծավալները, փաստագրման աշխատանքների իրականացումը, հարակից բոլոր գործողությունների իրականացումը ամրագրված և որոշված է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի 06-Ն հրամանի հավելված 2-ի պահանջներով: Այլընտրանքային լուծումներ ներկայացվել են հետախուզահորերի փորձնական բացահանքի ռեկուլտիվացիայի հետ կապված: Հարթեցման, հողի բերրի շերտի հետլցման, փխրեցման աշխատանքներից հետո նախատեսվում է կատարել այդ տարածքների պարարտացում օրգանական պարարտանյութերով, բազմամյա խոտաբույսերի և լոբազգիների նախապես մշակված սերմերի ցանք:

Զրոյական (հրաժարման) տարբերակ չի դիտարկվում, քանի որ.

- հանքարդյունաբերության և շինարարության ոլորտներից վճարվող հարկերը հանդիսանում են ՀՀ պետական բյուջեի համալրման հիմնական հոդվածներից մեկը: Համաայն ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների՝ ՀՀ 2024 թ. պետական բյուջեի դեֆիցիտը կկազմի 340 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 3.2 տոկոսը: Հետևաբար, նախատեսվող գործունեությունը նպաստելու է պետական բյուջեի դեֆիցիտի կրճատմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացման ապահովմանը;
- շինարարության փուլում է գտնվում Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր- Ծրագիր 4-ի շրջանակներում Մ2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհը, ինչի իրականացման համար անհրաժեշտ են բալաստային հումքի մեծ ծավալներ, իսկ Կապանի տարածաշրջանում գտնվող Կարաչիմանի ԱԿԽ հանքավայրի և Կարաչիմանի ԱԿԽ հանքավայրի Արկա տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքները դադարեցվել են՝ կապված ՀՀ պետական սահմանին մոտ գտնվելու հանգամանքի հետ:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

5.1. Ազդեցությունը մթնոլորտային օդի վրա

Հայցվող տարածքում ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ փոշու արտանետումները կապված են հետախուզահորերից հանված ԱԿԽ զանգվածը էքսկավատորի շերտից մակերևույթին թափելու գործընթացի հետ: Էքսկավատորի շերտից ԱԿԽ զանգվածի թափման ժամանակ առաջացող փոշու միանվագ առավելագույն արտանետումը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M = K_1 \cdot K_2 \cdot K_3 \cdot K_4 \cdot K_5 \cdot K_7 \cdot K_8 \cdot B \cdot G_v \cdot 10^6 / 3600, \text{ գ/վ}$$

րձե K_1 – հորերից հանվող հումքի մեջ փոշենման ֆրակցիայի (0-200մկմ) տեսակարար կշիռն է, 0.05

K_2 – աէրոզոլի (0-10մկմ) անցնող փոշու տեսակարար կշիռն է, 0.03

K_3 – օդերևութաբանական պայմանները հաշվի առնող գործակիցն է, 1

K_4 – փոշեզոյացման պայմանները հաշվի առնող գործակից, 1

K_5 – հումքի խոնավությունը հաշվի առնող գործակից, 0.01

K_7 – հումքի խոշորությունը հաշվի առնող գործակից, 0.07

K_8 – ուղղիչ գործակից, որը հաշվի է առնում միաժամանակ գործող բեռնափոխադրման սարքավորումների քանակությունը, 0.7

B – բեռնաթափման բարձրությունը հաշվի առնող գործակից, 0.5

G_v – մեկ ժամվա ընթացքում մշակվող հումքի քանակը, 20 տ/ժամ

$$M = 0.05 \cdot 0.03 \cdot 1 \cdot 1 \cdot 0.01 \cdot 0.07 \cdot 0.7 \cdot 0.5 \cdot 20 \cdot 10^6 / 3600 = 0.039 \text{ գ/վ}$$

Աշխատանքների ամբողջ ընթացքում, այսինքն հորերից 172.8տ (16 հետախուզահոր $\times 1.5\text{մ}^2 \times 4.5\text{մ} \times 1.6\text{տ/մ}^3$) գրունտի հանման և բեռնաթափման ժամանակ առաջացող փոշու քանակը կհաշվարկվի հետևյալ բանաձևով.

$$\Pi = K_1 \cdot K_2 \cdot K_3 \cdot K_4 \cdot K_5 \cdot K_7 \cdot K_8 \cdot B \cdot G_{\text{տար.}}, \text{ տ/տարի}$$

$$\Pi = 0.05 \cdot 0.03 \cdot 1 \cdot 1 \cdot 0.01 \cdot 0.07 \cdot 0.7 \cdot 0.5 \cdot 172.8 = 0.0000635 \text{ տ}$$

Հետախուզահորերի անցման, հետևաբար փոշու արտանետման հետ կապված աշխատանքներն իրականացվելու են միայն 2026 թվականի 2-3-րդ եռամսյակներում, հետևաբար դաշտային աշխատանքների ամբողջ ընթացքում հետախուզահորերից հանվող և բեռնաթափվող ԱԿԽ զանգվածից արտանետվելու է 0.0000635տ փոշի:

Աշխատանքները սպասարկող RANGE ROVER SPORT 500 SS 10 պետհամարանիշով մարդատար ավտոմեքենան տեղաշարժվում է բացառապես ասֆալտապատ ճանապարհով, օգտագործվում է անձնակազմը Սյունիքի երևակման տարածք հասցնելու և աշխատանքների ավարտից հետո կեցավայր վերադարձնելու համար: Երևակման տարածքում, արտաճանապարհային պայմաններում բնահողային ճանապարհներով մարդատար մեքենան չի տեղաշարժվում, փոշու արտանետում չի առաջացնում: RANGE ROVER SPORT մեքենան կահավորված է կատալիտիկ չեզոքացուցիչով, ըստ ՀՀ կառավարության 25.01.2005թ.-ի №91-Ն որոշման՝ այս տեսակի ավտոմեքենաների համար արտանետումների հետ կապված հաշվարկներ չեն կատարվում, մթնոլորտային օդի վրա ազդեցություններ չեն գնահատվում:

5.2. Ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա

Ջրային ռեսուրսների՝ Ողջի գետի աղտոտում տեղի չի ունենա, քանի որ Սյունիքի երևակման տարածքը գտնվում է գետից 100-164մ հեռավորության վրա : Աշխատանքները կրում են խիստ սահմանափակ բնույթ և իրականացվելու են 17 հետախուզահորերի 25.5ք.մ տարածքում ($17 \times 1.5 \text{մ}^2 = 25.5 \text{մ}^2$) :

Հարավային ջրավազանային կառավարման տարածքի 2025-2030 թվականների կառավարման պլանի նախագծով սահմանվել են.

- սանիտարական պահպանման տարածքներ՝ աղբյուրների և ՕԿՋ-ների համար առանձնացվել է ջրաէկոհամակարգերի 79 սանիտարական պահպանման տարածք՝ 2.01 կմ² ընդհանուր մակերեսով,
- հոսքի ձևավորման տարածքներ՝ տարանջատվել է 112 հոսքի ձևավորման տարածք՝ 929.14 կմ² ընդհանուր մակերեսով,
- ստորերկրյա ջրերի պահպանման տարածքներ՝ 121 հորատանցքի և 472 աղբյուրի համար առանձնացվել են ստորերկրյա ջրերի պահպանման տարածքներ՝ 38.69 կմ² ընդհանուր մակերեսով,
- ջրապահպան գոտիներ՝ ջրապահպան գոտու մակերեսը կազմում է 31.89 կմ²,
- էկոտոն՝ առանձնացվել է գետերի 11 էկոտոնի տարածք՝ 1.711 կմ² ընդհանուր մակերեսով,
- անօտարելի գոտիներ՝ 11 ջրանցքի երկայնքով առանձնացվել են 10 մ լայնությամբ անօտարելի տարածքներ: 6 խոշոր ջրամբարի պատվարների համար անօտարելի գոտին սահմանվել է 100 մ: Անօտարելի գոտիների ընդհանուր մակերեսը կազմում է 3.277 կմ² :

Ջրակոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրային ռեսուրսների պահպանման տարածքների, ջրապահպան գոտիների, էկոտոնի և անօտարելի գոտիների վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփված է ջրային պետական կադաստրում աշխարհագրատեղեկատվական համակարգի քարտեզի տեսքով, որը հասանելի է <http://swcadastre.env.am/ImageGallery.aspx?Tp=6> հղումով :

Վերլուծվել է նշված հղումով տեղադրված ջրային ռեսուրսների պահպանության գոտիների քարտեզը, որի վրա համադրվել է Սյունիքի ԱԿԽ երևակման տարածքը (նկար 20): Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը ներառված չէ ջրային ռեսուրսների պահպանության նպատակով առանձնացված որևէ գոտու սահմաններում, այսինքն ծրագրավորվող աշխատանքները որևէ ազդեցություն չեն ունենում ջրային ռեսուրսների կամ ենթակառուցվածքների համար ունենալ չեն կարող:

Երևակման տարածքում սեպտիկ հոր չի նախատեսվում: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներն իրականացնող անձնակազմի հանգիստը, սնվելը և հիգիենիկ պրոցեդուրաները կատարվելու են երևակման հարավային-հարավարևմտյան հատվածում գտնվող «Կապանի ՃՇՇ» ընկերության արտադրական շինությունում (նկար 21), որտեղ կազմակերպված են բոլոր անհրաժեշտ կենցաղային պայմանները :


Երկրաբանահետախուզական աշխատանքների համար անհրաժեշտ տեխնիկական և խմելու ջուրը նախատեսվում է բավարարել 020-24 ջրօգտագործման թույլտվությամբ ընկերությանը տրամադրված ջրաբանակի հաշվի (ջրառի կետը՝ $X = 46^{\circ} 28' 59.7''$ $Y = 39^{\circ} 11' 39.1''$):

5.3. Ազդեցությունը հողային ռեսուրսների վրա


Հողային ռեսուրսների վրա հնարավոր է երկու տեսակի ազդեցությունը, ինչի նկարագիրը ներկայացվում է ստոն.

- խախտում հետախուզահորերի տարածքում: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում հողաբուսական շերտը խախտվելու է հետախուզահորերի 25.5մ^2 տարածքում: Հետախուզահորերի տարածքներից հեռացվելու է 0.25մ միջին հզորությամբ ($0.2-0.3\text{մ}$ սահմաններում) և 6.375մ^3 ծավալով (հողաբուսական շերտը նախապես հեռացվելու, կուտակվելու է հորի մոտակայքում և այնուհետև օգտագործվելու է ռեկուլտիվացիոն աշխատանքների համար:

- Աղտոտում նավթամթերքներով էքսկավատորի տեղաշարժման ժամանակ:



Նկար 20.



Նկար 21.

5.4. Ազդեցություն կենսաբազմազանության վրա

Սյունիքի երևակման սահմաններում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում կարճաժամկետ կտրվածքով խախտվելու է բուսածածկը 25.5մ² տարածքում:

Տեղի կունենա կենդանիների՝ հիմնականում թռչունների և կրծողների միգրացիա տեղամասի տարածքից, քանի որ գործարկվող էքսկավատորի աղմուկը, թրթռումները և անձնակազմը հանդիսանալու են անհանգստացնող գործոններ:

Խոշոր կաթնասունների որջեր և բներ տեղամասի տարածքում չեն դիտարկվել: Տեղամասի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ նույնպես չեն արձանագրվել:

Սյունիքի երևակումը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում, այստեղ հաշվառված չեն բնության հուշարձաններ: Հետևաբար, պահպանվող էկահամակարգերի վրա որևիցե ազդեցության աշխատանքների արդյունքում չի դրսևորվելու:

Անտառային զանգվածներ Սյունիքի երևակման տարածքում չկան, հետևաբար անտառային ռեսուրսների վրա որևիցե ազդեցության աշխատանքների արդյունքում չի դրսևորվելու:

5.5. Աղմուկ և թրթռումներ

Ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների անբարենպաստ ներգործություն ունեցող գործոններից մեկը առաջացող աղմուկն է: Հատկապես կարևորվում է աղմուկի մակարդակի ուսումնասիրությունն ու գնահատումը մոտակա բնակավայրի տարածքում: Սյունիքի երևակման տարածքում աղմուկի առաջացման աղբյուրը աշխատանքները սպասարկող էքսկավատորի աշխատանքն է:

Ըստ գործող նորմատիվ պահանջների, աղմուկի թույլատրելի մակարդակը բնակելի գոտում կազմում է 45 դԲԱ: Աղմուկի ազդեցությունը ազդակիր Սյունիք բնակավայրում գնահատելու նպատակով կատարվել են հետևյալ հաշվարկները:

Երևակման տարածքում էքսկավատորի աշխատանքից առաջացող հաշվարկային ձայնային բնութագիրը՝ LAէկվ ընդունված է 75դԲԱ:

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

$LA_{տար} = LA_{էկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta LA_{էկր} - \Delta LA_{կանաչ}$ քանաձևով, որտեղ՝

$LA_{էկվ}$ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, $LA_{էկվ}=75$ դԲԱ,

$\Delta LA_{հեռ}$ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված, $\Delta LA_{հեռ}$ կազմում է 20դԲԱ,

$\Delta LA_{էկր}$ - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով, $\Delta LA_{էկր}=10$ դԲԱ,

$\Delta LA_{կանաչ}$ - աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով, $\Delta LA_{կանաչ}=5$ դԲԱ:

Աղմուկի մակարդակը Սյունիք բնակավայրի մոտ կկազմի՝

$La_{տար} = LA_{էկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta LA_{էկր} - \Delta LA_{կանաչ} = 75 - 20 - 10 - 5 = 40$ դԲԱ (նորման 45դԲԱ):

Գիշերային ժամերին երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ տեղամասի սահմաններում չեն կատարվելու:

Երևակման տարածքում էքսկավատորի աշխատանքից առաջանալու են 1-ին կարգի տեխնոլոգիական թրթռումներ (վիբրացիա): Թրթռման գումարային արագության ճշգրտված մակարդակը կազմում է 107դԲ, թրթռման գումարային արագության համարժեքային ճշգրտված մակարդակը (ստացված մակարդակների գույգերով գումարման եղանակով՝ հաշվի առնելով ՀՀ առողջապահության նախարարի 17.05.2006թ.-ի №533-Ն հրամանի հիգիենիկ նորմերի 20-րդ կետի 4-րդ աղյուսակի ուղղումները)՝ 103.2դԲ:

5.6. Ընդերքօգտագործման թափոններ

Սյունիքի երևակման տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում ընդերքօգտագործման չեն առաջանալու: Հետախուզահորերի մակերեսից հեռացվող 6.375 մ³ հողաբուսական շերտը ընդերքօգտագործման թափոն չի հանդիսանում, քանի որ համաձայն ՀՀ հողային օրենսգրքի և ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշման.

- հողերի բերրի շերտը օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով,

- հողերի պահպանության նպատակով՝ հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի հանվում և պահպանվում է,

- բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվում են միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարացումը:

Հետախուզական հորերից հանված 107.875մ³ ծավալով ավազակոպճային զանգվածը ընդերքօգտագործման թափոն չէ, դա ուսումնասիրության առակա օգտակար հանածոն է: Նմուշարկումից և փաստագրումից հետո 107.875մ³ ծավալով ավազակոպճային զանգվածը հետ է լցվում հորերի տարածք:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ առաջանում են մի շարք արտադրական թափոններ, այդ թվում.

- Ներքին այրման շարժիչներով աշխատող մեքենաների նորոգման-շահագործման աշխատանքների ժամանակ առաջանալու են բանեցված շարժիչների յուղերի թափոններ (մոտ 5լ/տարեկան): Ծածկագիրը՝ 54100201 02 03 3: Կազմը՝ յուղ 94.6%, մեխանիկական խառնուկներ 2.1%, ջուր 3.2%: Թունավոր է, էկոթունավոր, դյուրավառ, կոռոզիոն ակտիվության տեսակետից ոչ ակտիվ, ռեակցիոնունակ չէ: Գտնվում է հեղուկ ագրեգատային վիճակում, խտությունը՝ մոտ 910կգ/մ³: Քանի որ մեքենաների (էքսկավատոր, թեթև մարդատար մեքենա) տեխնիկական սպասարկումը նախատեսվում է կատարել «Կապանի ՃՇՇ» ՍՊԸ արտադրական տարածքում կամ Կապան, Սյունիք բնակավայրերի տարածքում գործող մասնագիտացված կազմակերպություններում, ապա բուն Սյունիքի երևակման տարածքում այս տեսակի թափոնների կառավարման աշխատանքներ չի կատարելու :

- Տարեկան կտրվածքով առաջանալու է 0.2տ կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի), որը պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 9120040001004 : Կազմը՝ ապակի, փայտ, թուղթ, կտոր, սննդի մնացորդներ, պոլիմերներ: Հրդեհապայթյունավտանգ չէ, կոռոզիոն ակտիվության տեսակետից պասիվ է, ռեակցիոնունակ չէ:

Կենցաղային թափոնը փոխադրվելու է մոտակա աղբավայր, աղբահանության նպատակով կնքվելու է համապատասխան պայմանագիր, վճարումը կատարվելու է ըստ պայմանագրի և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

5.7. Պատմամշակութային միջավայր

Սյունիք բնակավայրի պատմամշակութային հուշարձանները գտնվում են Սյունիքի երևակման տարածքից 1.0-1.8կմ հեռավորությունների վրա:

2025 թվականի ապրիլին՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրին և ՇՄԱԳ հաշվետվության կազմմանը նախորդող դաշտային դիտարկումների ժամանակ, հայցվող տեղամասի սահմաններում ակնադիտական զննմամբ պատմամշակութային հուշարձաններ՝ վանքեր, եկեղեցիներ, ամրոցներ, խաչքարեր, մատուռներ, տապանաքարեր և այլն, չեն արձանագրվել:

Հետևաբար, ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պատմամշակութային միջավայրի վրա ազդեցություններ չեն դրսևորվելու:

5.8. Անտառային ռեսուրսներ

Սյունիքի ԱԿԽ երևակման սահմաններում անտառային հողեր, անտառածածկ տարածքներ չկան: Հետևաբար, անտառային ռեսուրսների/անտառապատ տարածքների վրա որևէ ազդեցություն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում չի դրսևորվելու:

5.9. Սոցիալ-տնտեսական ազդեցություն

«Կապանի ՃՇՀ» ՍՊ ընկերությունը նախատեսում է մի շարք սոցիալական աջակցության ծրագրեր, ինչի նպատակով կատարվում է ազդակիր համայնքի տնտեսական զարգացման ուղղվածության և հնարավոր զարգացման ուղղությունների վերաբերյալ ելակետային պայմանների հավաքագրում: Աջակցության հարցերը կքննարկվեն Սյունիք ազդակիր բնակավայրի վարչական ներկայացուցիչների և Կապան խոշորացված համայնքի ղեկավարի հետ:

Նախնական տվյալներով, սոցիալական աջակցություն է ցուցաբերվելու կրթական հաստատություններին, ընկերությանը պատկանող տեխնիկական միջոցները կմասնակցեն համայնքային ճանապարհների շինարարության/բարեկարգման աշխատանքներին:

5.10 Մանիտարական-պաշտպանիչ գոտի.

ՀՀՀՆ 31-04.01-2024 շինարարական նորմերով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար սանիտարական-պաշտպանիչ գոտու սահմանում նախատեսված չէ: Նախատեսվող գործունեության բնույթին ամենամոտը առանց հորատապայթեցման՝ մարմարի, ավազի, մանրախճի, կավի արդյունահանման

արտադրական օբյեկտների (քարհանքեր) աշխատանքն է, որի համար սահմանված է 100մ սանիտարական-պաշտպանիչ գոտի:

Ազդակիր Սյունիք բնակավայրի մոտակա բնակելի շինությունները գտնվում են հայցվող տարածքից 1140մ, Սզնակ բնակավայրի շինությունները՝ 950մ, Դիցմայրի բնակավայրի շինությունները՝ 1540մ հեռավորությունների վրա, ինչը գերազանցում է սանիտարական-պաշտպանիչ գոտու չափերը 9.5-15.4 անգամ:

6. ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՈՐԾՈՆՆԵՐԸ, ՌԻՍԿԵՐԸ

Ազդակիր Սյունիք բնակավայրի մոտակա բնակելի շինությունները գտնվում են երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող Սյունիքի ԱԿԽ երևակման տարածքից 1140մ, Սգնակ բնակավայրի շինությունները՝ 950մ, Դիցմայրի բնակավայրի շինությունները՝ 1540մ հեռավորությունների վրա:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները խիստ սահմանափակ են, աննշան և կարճաժամկետ:

Հողերի և բուսականության կարճաժամկետ խախտումը կատարվելու է ընդամենը 25.5մ² տարածքում, նախատեսվում են ռեկուլտիվացիոն աշխատանքներ հետախուզահորերի տարածքում, ինչը թույլ կտա վերականգնել լանդշաֆտային ամբողջականությունը:

Աղմուկի մակարդակը ազդակիր Սյունիք բնակավայրում գտնվում է թույլատրելի մակարդակում:

Ընդերքօգտագործման թափոններ չեն առաջանում, ընդերքօգտագործման թափոնների օբյեկտ չի ձևավորվում: Արտադրական թափոնները և կենցաղային աղբը կառավարվելու են համապատասխան մասնագիտացված ընկերությունների կողմից:

Հետևաբար, ավազակոպճային խառնուրդի երկրաբանական ուսումնասիրության արդյունքում ազդակիր Սյունիք գյուղի բնակչության առողջության վրա ազդեցությունների դրսևորում չի նախատեսվում:

Տեղամասի տարածքում աշխատողների առողջության վրա ազդեցությունները կարող են կապված լինել հետևյալ գործոնների հետ.

1. Շնչառական խնդիրներ, որոնք պայմանավորված են էքսկավատորի աշխատանքի և տեղաշարժի ժամանակ առաջացող փոշու արտանետումներով;
2. Լսողական խնդիրներ, որոնք պայմանավորված են էքսկավատորի աշխատանքի ժամանակ առաջացող ձայնային ազդեցություններով:

Աշխատակիցների առողջության համար ռիսկերը բացառելու/չեզոքացնելու նպատակով նախատեսվում է հետախուզական հորերի տարածքի ջրցանում/խոնավեցում մինչև փորման աշխատանքները, ինչի նպատակն է փոշու

արտանետումների կրճատում: Ավագակոպճային խառնուրդը ընդերքում գտնվում է խոնավ վիճակում, հետևաբար հորերի փորման և խորացման ընթացքում փոշու արտանետումները լինելու են խիստ սահմանափակ: Միաժամանակ, տեղամասի տարածքում շաբաթական մեկ անգամ 24 ժամ տևողությամբ կատարվելու է մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիաների մոնիթորինգ, ինչը թույլ կտա հսկել իրականացվող գործունեության համապատասխանությունը նորմատիվային փաստաթղթերին:

Երևակման տարածքում երկրաբանահետախուզական աշխատանքների և ավտոտրանսպորտի տեղաշարժի ժամանակ առաջանալու է փոփոխական ընդհատվող աղմուկ:

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ.-ի № 138 հրամանի մեքենաների վարորդների և սպասարկող անձնակազմի աշխատատեղերում ձայնի սահմանային թույլատրելի մակարդակը կազմում է 80դԲԱ: Տեղամասի տարածքում կանխատեսվող ձայնի սահմանային թույլատրելի մակարդակը կազմում է 75դԲԱ, ինչը բավարարում է նորմատիվային փաստաթղթերի պահանջներին: Ձայնային ազդեցությունը անձնակազմի առողջության վրա նվազեցնելու համար աշխատակիցները կրելու են ձայնամեկուսիչ ականջակալեր: Տեղամասի տարածքում պարբերաբար կատարվելու է նաև ձայնի մակարդակի մոնիթորինգ:

Հետախուզման աշխատանքները կատարող անձնակազմի հանգստի և սնվելու պայմանները կազմակերպվելու են հայցվող տարածքից հարավային-հարավ-արևմտյան հատվածում գտնվող «Կապանի ՃՇՇ» պատկանող արտադրական տարածքում, որտեղ առկա են բոլոր անհրաժեշտ կենցաղային պայմանները՝ սնվելու համար տարածք, խոհանոց անհրաժեշտ պարագաներով, լվացարան, զուգարան:

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Վառելիքի հիմնական լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքները կատարվելու են «Կապանի ՃՇՇ» արտադրական տարածքներում կամ հարակից բնակավայրերի լիցքավորման կայաններում, որտեղ առկա են համապատասխան պայմաններ:
- Մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարվելու է հարակից բնակավայրերի համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպություններում, որտեղ առկա են անհրաժեշտ պայմաններ:
- Նավթամթերքների, նավթամթերք պարունակող մնացորդների պահեստավորում և պահում Սյունիքի երևակման տարածքում չի կատարվելու:
- Աշխատանքները սպասարկող էքսկավատորի և մարդատար մեքենայի վրա տեղադրվելու են արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքեր (կատալիտիկ չեզոքացուցիչներ):
- Փոշենստեցման նպատակով նախքան փորման աշխատանքները կատարվելու է հետախուզահորերի տարածքի ինտենսիվ ջրցանում:
- Նավթամթերքներով հողերի աղտոտումը կանխելու նպատակով էքսկավատորի տեղաշարժը կատարվելու է շարժման ուղեծրով նախապես տեղադրված ПБЖ-32 մակնիշի փոխադրվող երկաթբետոնե տիպային սալերի վրայով :
- Կենցաղային աղբի համաքում հատուկ անթափանց տարողություններում, աղբահանության պայմանագրի կնքում տարածաշրջանում գործող օպերատորի հետ, աղբահանության վճարի հաշվարկում և վճարում:
- Կատարվելու է օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով:
- Հետախուզահորերի անցման ժամանակ 0.25մ միջին հզորությամբ հողաբուսական շերտի հեռացում և կուտակում կարճաժամկետ կտրվածքով փորվածքների անմիջական հարևանությամբ, կույտավորման ընթացքում կատարվում է բոտրիխլոա սովորական (Bothriochloa ischaemum) և անիսանտ տանիքային (Anusantha tectorum) սերմերի ցանկ :

- Ռեկուլտիվացիոն աշխատանքներ հետախուզահորերի տարածքում : Ռեկուլտիվացիայի ենթակա ընդհանուր մակերեսը կկազմի 25.5մ² (17 հետախուզահոր, յուրաքանչյուրը 1.5մ² մակերեսով) :

Ռեկուլտիվացիոն աշխատանքների ժամանակ հորերի տարածք նախ հետ է լցվում 107.875մ³ ծավալով ավազակոպճային կուտակը, այնուհետև հարթեցված մակերեսի վրա փռվում է 6.375մ³ հողային զանգվածը : Այնուհետև հողերը պարարտացվում են օրգանական ծագման պարարտանյութով և կատարվում է սովորական (*Bothriochloa ischaemum*) և անիսանտ տանիքային (*Anusantha tectorum*) սերմերի կրկնակի ցանկ՝ կենսաբանական ռեկուլտիվացիայի արդյունավետ ընթացքը ապահովելու համար : Ռեկուլտիվացիոն աշխատանքների ժամանակ նախատեսվում է օգտագործել «Ազոտովիտ-1» հայկական արտադրության էկոլոգիապես մաքուր համապիտանի ազոտական կենսապարարտանյութը:

Ռեկուլտիվացիոն ծախսերի հաշվարկը ներկայացված է աղյուսակ 35-ում:

Աղյուսակ 35.

Հ/Հ	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափման միավորը	Արժեքը
1	2	3	4
1.	107.875մ ³ ծավալով ԱԿԽ զանգվածի հորերի տարածք հետլցման համար էքսկավատորի վառելիքի արժեք	հազ.դրամ	40.0
2.	Էքսկավատորավարի աշխատավարձ ռեկուլտիվացիայի լեռնատեխնիկական փուլի աշխատանքների համար (8 ժամ տևողությամբ 1 աշխատանքային օր)	«___»	25.0
3.	6.375մ ³ հողային զանգվածի փռում և հարթեցում ձեռքով (30.2մարդ/ժամ, 1 բանվոր, 8 ժամ տևողությամբ 4 աշխատանքային օր)	«___»	60.0
4.	Հարթեցված շերտի պարարտացում օրգանական պարարտանյութով, <i>Bothriochloa ischaemum</i> և <i>Anusantha tectorum</i> սերմերի ցանք	«___»	70.0
5.	Ընդամենը	«___»	195.0
6.	Անուղղակի ծախսեր (5-րդ տողի 5.3%)	«___»	10.4
7.	Շահույթ (5+6 տողեր)×10%)	«___»	20.6
	Ընդամենը	հազ.դրամ	226.0

- Երկրաբանական քարտեզագրման, երթուղիների կատարման ժամանակ տարածքի դիտարկում թռչունների բների հայտնաբերման նպատակով : Առկայության դեպքում, դրանց տեղափոխում աշխատանքների տարածքից դուրս :

- Երթուղիների ընթացքում երկրաբանի կողմից ձեռնափայտով կամ երկրաբանական մուրճով կատարվելու են հարվածներ տեղամասի մակերևույթին, ինչը ստեղծելու է հարվածային ալիքներ և դառնալու է անհանգստության և տարածքը լքելու պատճառ սողունների համար : Այս միջոցառումը թույլ կտա բացառել մարդ-կենդանի հանդիպումից :

- Աշխատանքներին մասնակցող մասնագետների իրազեկում տեղամասի տարածաշրջանում հայտնի ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ :

- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացնելիս ընկերության կողմից գործունեության հայտում և հետագայում՝ գնահատման հաշվետվության մեջ ներառվում և հետագայում իրականացվում են հողերում առկա օբյեկտների պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները՝

1) վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնին.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման կանխարգելում:

Հողերում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է՝

1) առանձնացնել օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

2) Ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

- Տեղադրված տիպային սալերից դուրս էքսկավատորի տեղաշարժի բացառում :
- Աղմուկի մակարդակի պարբերական վերահսկում:
- Խոզանների, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքների այրման բացառում :
- Բնական միջավայրում կենցաղային աղբի այրման բացառում :
- Հորերի տարածքից հանված և հարակից տարածքում կույտավորված ԱԿԽ զանգվածի ծածկում անթափանց պոլիէթիլենային թաղանթներով :
- Պատահական գտածոների ընթացակարգի կիրառում՝ հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով.

✓ համապատասխան անձնակազմի և պայմանագրով աշխատողների ուսուցում պատահական հնագիտական գտածոների ճանաչման, դրանց հետ վարվելակերպի և արձագանքի ուղղությամբ;

✓ գտածոների ուսումնասիրություն հրավիրված հնագետների կողմից, որպեսզի վերջիններս ուղղորդեն հնագիտական գտածոների ճանաչման և արձագանքման գործընթացը,

✓ արձանագրությունների կազմում պատահական գտածոներին արձագանքելու համար, ներառյալ աշխատանքի ժամանակավոր դադարեցումը գտածոների հայտնաբերման վայրում;

- ✓ պետական մարմինների ծանուցում,
- ✓ պատահական գտածոների գնահատման և պեղումների արագացված ընթացակարգերի կիրառում, ազդեցությունների սահմանափակման համար, միաժամանակ նվազեցնելով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ուշացումները:

Ծրագրավորված բնապահպանական միջոցառումները ներկայացվում են նաև աղյուսակի տեսքով.

Աղյուսակ 36.

Գործողությունը	Հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բնական բաղադրիչի վրա	Չեզոքացման միջոցառումը	Արժեքը
1	2	3	4
Հետախուզական փորվածքների անցում, էքսկավատորի տեղաշարժ	Փոշու և ծխագազերի արտանետումներ, մթնոլորտային օդի որակի փոփոխություն	Ջրցան	Տարեկան 70.0հազ.դրամ
		Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում	Մեքենաները կահավորված են համապատասխան սարքերով, լրացուցիչ ծախս չի նախատեսվում
		Տիպային սալերի տեղադրում էքսկավատորի տեղաշարժի համար	380.0հազ.դրամ
		Մթնոլորտային օդի որակի պարբերական մոնիթորինգ	480.0հազ.դրամ
		Խախտված տարածքների վերականգնում	226.0հազ.դրամ*
	Հողերի խախտում հետախուզահորերի տարածքում	Հողի բերրի շերտի նախնական հեռացում, պահեստավորում հարակից տարածքում, պարարտացում, սերմերի ցանք	80.0հազ.դրամ
		Խախտված տարածքների վերականգնում (լեռնատեխնիկական և կենսաբանական փուլերով)	226.0հազ.դրամ*

1	2	3	4
Հետախուզական փորվածքների անցում, տրանսպորտի տեղաշարժ	Տեղամասի տարածքի հողերի աղտոտում նավթամթերքներով	Տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը, յուղերի փոխարինումը, մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարվելու է մոտակա բնակավայրերում, «Կապանի ՃՇՇ» ՍՊԸ արտադրական տարածքում	Այս հողվածով ծախսեր չեն իրականացնելու
		Հողերի աղտոտվածության պարբերական մոնիթորինգ	288.0հազ.դրամ
		Պահեստավորված հողերի քիմիական կազմի մոնիթորինգ	222.0հազ.դրամ
		Տեխնիկայի և ավտոտրանսպորտի բացառապես գոյություն ունեցող ճանապարհներով	Այս հողվածով ծախսեր չեն իրականացնելու
	Բուսածածկի խախտում տեղամասի սահմաններում	Խախտված տարածքների վերականգնում (լեռնատեխնիկական և կենսաբանական փուլերով, ներառյալ սերմերի ցանկ, կտրոնների տնկում)	226.0հազ.դրամ*
		Կենսաբազմազանության մշտադիտարկում, տարեկան մեկ անգամ պարբերականությամբ	Տարեկան 550.0հազ.դրամ
		ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջների ապահովում	Տարեկան 75.0հազ.դրամ
	Կենդանիների միգրացիա լանդշաֆտի խախտման և առաջացող աղմուկի հետևանքով	Խախտված տարածքների վերականգնում (լեռնատեխնիկական և կենսաբանական փուլերով)	226.0հազ.դրամ*
		Աղմուկի մակարդակի չափումներ	Տարեկան 50.0հազ.դրամ

* նույն գումարն է, որը վճարվում է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշման դրույթներին համապատասխան

**8. ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԻՄՆԱԴՐՈՒՑԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՂԹՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 11-ի N 730-Լ որոշմամբ հաստատվել է մինչև 2035 թվականը հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը: Մշակված և հաստատված ռազմավարության հիմնական նպատակն է ոլորտի կարգավորման ու զարգացման, ընդերքի ռացիոնալ և համալիր օգտագործման, բնապահպանական և առողջապահական ռիսկերի կառավարման ու մեղմման, եկամուտների համաչափ/արդարացի բաշխման մեխանիզմների սահմանումը, որոնք կնպաստեն Հայաստանի տնտեսության երկարաժամկետ զարգացմանը:

Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման տեսլականը հիմնված է մի շարք ուղենիշային սկզբունքների վրա, այդ թվում.

1. Հայաստանի Հանրապետության ընդերքում առկա օգտակար հանածոների պաշարները պետք է ծառայեն ներկա և ապագա սերունդներին

Ընդերքում առկա օգտակար հանածոները գրեթե ամբողջությամբ, բացառությամբ ջրի և գետային ավազաններում առկա ավազի, չվերականգնվող են: Հետևաբար կարևոր է, որ առկա պաշարների արդյունավետ օգտագործմանը և ստացվող օգուտների արդարացի բաշխմանը զուգընթաց իրականացվի նոր պաշարների հայտնաբերում: Սյունիքի ԱԿԽ երևակման օգտակար հանառի պաշարները երկաթանական ուսումնասիրության աշխատանքները նախաձեռնել է «Կապանի ՃՇՇ» ՍՊ ընկերությունը, աշխատանքները իրականացվելու են ընկերության ֆինանսավորմամբ, ապահովելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր պահանջները:

2. Հանքարդյունաբերությունը պետք է նպաստի ողջ հանրության բարեկեցությանը:

Ընդերքը շահագործում են ֆինանսապես և տեխնիկապես կարող ընկերությունները, սակայն ընդերքի շահագործումից ստացված օգուտները պետք է հասանելի լինեն ողջ հասարակությանը: Նույն տրամաբանությամբ՝ օգտակար հանածոների արդյունահանման գործընթացը չպետք է բեռ դառնա ազդակիր համայնքների համար: «Կապանի ՃՇՇ» ՍՊ ընկերությունը ծրագրավորվող աշխատանքների ընթացքում նախատեսում է ֆինանսական աջակցություն ազդակիր համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերին: Հանքարդյունահանման

ընթացքում ստեղծվելիք, արդիական սարքավորումների շահագործման, հանքի սպասարկման և մատակարարման հետ կապված նոր աշխատատեղերը կնպաստեն գործազրկության կրճատմանը, արտագաղթի կանխմանը:

3. Հանքարդյունաբերության ոլորտի խնդիրը ոչ միայն բացասական ազդեցությունները մեղմելն է, այլ նաև գուտ դրական ազդեցություններ ձևավորելը: Ժամանակակից հանքարդյունաբերության ամենաբարձր ստանդարտները պահանջում են ընդհանուր հաշվեկշռում բացասական ազդեցության մեղմման ու դրական ազդեցություն թողնելու միջոցառումների ապահովում, ինչը հնարավոր է իրականացնել գործնականում: «Կապանի ՃՇՇ» ՍՊ ընկերությունը մշակել և շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությանն է ներկայացնում է բնապահպանական կառավարման համապարփակ պլան, որտեղ դիտարկվում են շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա ազդեցությունների կանխարգելման և չեզոքացման համալիր միջոցառումներ:

Ամփոփելով վերը նշվածը, կարող ենք փաստել, որ «Կապանի ՃՇՇ» ՍՊ ընկերության կողմից Սյունիքի ԱԿԽ երևակման տարածքում ծրագրավորվող ընդերքօգտագործման աշխատանքները իրենց բնույթով համապատասխանում են ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության ուղենիշային սկզբունքներին:

9. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ 24 ժամ տևողությամբ ;
2. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով երևակման տարածքի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով մշտադիտարկումներ՝ ամսեկան մեկ անգամ;
3. հետախուզահորերից հանված և հարակից տարածքում պահեստավորված հողերի նմուշարկում՝ տարեկան մեկ անգամ ;
4. կենսաբազմազանության ուսումնասիրություն, նկարագրում՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն (հստակ դիտարկան կետ նշել հնարավոր չէ, դիտարկումը կատարվելու է տեղամասում և հարակից տարածքներում) ;
5. աղմուկի մակարդակի վերահսկողություն :

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում:

Ստացված տեղեկատվությունը ներկայացվելու է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն՝ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման պահանջներին համաձայն:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մոնիտորինգի կետերի տեղադիրքը ներկայացված է ստորև նկար 22-ում:

Մշտադիտարկումների կառուցվածքները ներկայացվում է նաև աղյուսակ 37-ում:

Մշտադիտարկումների օբյեկտը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
1	2	3	4
Մթնոլորտային օդ, երևական տարածք, աշխատանքների իրականացման վայր, մոտեցնող ճանապարհ	Ծծմբի, ազոտի երկօքսիդներ	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	Շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Հողային ծածկույթ, երևական տարածք աշխատանքների իրականացման վայր	Նավթամթերքների պարունակություն	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	Ամսական մեկ անգամ
Հանված և պահեստավորված հողաբուսական շերտ, երևական տարածք, հետախուզահորերի հարակից հատված	Հողերի քիմիական կազմը (pH, կատիոնափոխանակման հատկությունները, էլեկտրահաղորդականության հատկանիշներ, մետաղների պարունակություն	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	Տարեկան մեկ անգամ
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ. տեղամասի հարակից շրջան	Տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	Հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	Տարեկան մեկ անգամ
Աղմուկի մակարդակ, տեղամասի տարածք, աշխատանքների իրականացման վայր	Ձայնային բնութագիր	Չափումներ ավտոմատ սարքերով	Տարեկան մեկ անգամ

Երկրաբանական ուսումնասիրության դաշտային աշխատանքների ընթացքում (երկու եռամսյակ – 6 ամիս) իրականավելու է.

- մթնոլորտում ծծմբի և ազոտի երկօքսիդների որոշում (6 ամիս – 24 շաբաթ – ամեն շաբաթ 20.0հազ.դրամ, ընդհանուր 480.0հազ.դրամ)


- աղտոտում նավթամթերքներով (6 ամիս-24 շաբաթ – ամեն շաբաթ 12.0հազ.դրամ, ընդհանուր 288.0հազ.դրամ),

- պահեստավորված հողաբուսական շերտի քիմիական կազմի, pH և էլեկտրահաղորդականության որոշում (6 ամիս- ամեն ամիս 37.0հազ.դրամ, ընդհանուր 222.0հազ.դրամ)

- աղմուկի մակարդակ (տարեկան մեկ անգամ 50.0հազ.դրամ),

- կենսաբազմազանություն (տարեկան մեկ անգամ 550.0հազ.դրամ):

Մշտադիտարկման նպատակով ընկերությունը մասնահանելու է 1590.0հազ.դրամ:



Նկար 22.

10. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Արտակարգ իրավիճակների պատրաստ լինելու համար նախատեսվում են շարժական կապի միջոցների առկայություն հետախուզական աշխատանքներ իրականացնող անձնակազմի մոտ, առաջին բուժօգնության միջոցների առկայություն, անվտանգության կանոնների վերաբերյալ անձնակազմի գիտելիքների ստուգում:

Երևակման տարածքում արտակարգ իրավիճակները կարող են պայմանավորված լինեն հետևյալ գործոններով.

1) Երկրաշարժ՝ հաշվի առնելով, որ Հանրապետության տարածքը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում; Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ երևակման տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 300սմ/վրկ² կամ 0.3g գրունտի հորիզոնական արագացման մեծություն:

Նախատեսվում է մշակել ուժեղ երկրաշարժերի դեպքում գործողությունների պլան՝ վտանգավոր տարածքներից աշխատակիցների ապահով տարահանումն իրականացնելու նպատակով: Անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում իրականացնելու ժամանակ առանձին ներկայացվելու են նաև երկրաշարժերի ժամանակ աշխատակիցների պահվածքի կանոնները, գործողությունների հաջորդականությունը: Աշխատանքները սպասարկող կենցաղային նշանակության վազոն-տնակում նախատեսվում են առաջին օգնության դեղորայքային փաթեթներ:

2) Հրդեհներ՝ կապված մարդածին գործոնների հետ: Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ: Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան: Տեղամասում՝ հատուկ հատկացված վայրում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով արկղ, բահ:

3) Անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագացում, անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ, թանձր մառախուղ, ամպրոպ):

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների իհայտ գալու դեպքում կիրառվում են հետևյալ միջոցառումները (ըստ իրավիճակի).

- ավելացվում է կատարվելիք ջրցանը,
- կրճատվում է աշխատանքի տևողությունը,
- կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը,
- բեռնատար մեքենաները կահավորվում են հատուկ մառախուղի լույսերով,
- աշխատակիցները պատսպարվում են վագոն-տնակում:

Սյունիքի երևակման տարածքում սողանքային մարմիններ չկան, հետևաբար սողանքային երևույթների հետ կապված արտակարգ իրավիճակներ չեն լինելու :

11. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները կկատարվեն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի, ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի և «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվային փաստաթղթերի դրույթներին համապատասխան:

Մասնավորապես, «Կապանի ՃՇՇ» ՍՊ ընկերության վարչակազմը պարտավորվում է ապահովել աշխատանքների տեխնիկական անվտանգության հետ կապված հետևյալ պահանջները.

- աշխատանքի են թույլատրվում համապատասխան մասնագիտական կրթություն կամ որակավորում ունեցող անձիք,

- աշխատանքներում ներգրավված ողջ անձնակազմը յուրաքանչյուր դաշտային սեզոնից առաջ անցնում է պարտադիր անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում,

- բացառվում է աշխատանքների իրականացումը այն տարածներում, որտեղ հնարավոր են սողանքային, քարաթափման, սելավային երևույթներ կամ առկա է ջրհեղեղի վտանգ,

- դաշտային պայմաններում աշխատանքներ իրականացնող անձնակազմը պետք է ունենա համապատասխան հանդերձանք, պիտույքներ, առաջին բժշկական օգնության անհատական պարագաներ, արտակարգ իրավիճակի վերաբերյալ ազդարարման գործիքակազմ,

- երկրաբանական երթուղիները իրականացվելու են առնվազն երկու աշխատակցի մասնակցությամբ,

- երկրաբանական երթուղիները կատարվելու են բացառապես օրվա լուսավոր ժամանակահատվածում,

- վտանգավոր տեխնիկական օբյեկտների (էլեկտրահաղորդման օղային գծեր, կաբելային գծեր, գազատարեր, երկաթգիծ և այլն) պահպանման գոտիներում աշխատանքների իրականացման անհրաժեշտության դեպքում դրանք համաձայնեցվում են տեխնիկական օբյեկտները շահագործող կազմակերպությունների հետ:

Երկրաբանահետախուզական աշխատանքներ իրականացնող մասնագետներին տրամադրվում են վտանգավոր գոտիների բաշխումը արտահայտող քարտեզներ,

- Էլեկտրական ցանցերի ենթակառուցվածքների տարածքում մեքենաների տեղաշարժը կատարվում է բացառապես այն հատվածներով, որտեղ ճանապարհի հարթության և օդային գծերի միջև առկա անհրաժեշտ տարածություն,

- բոլոր սարքավորումները շահագործվում են տեխնիկական փաստաթղթերին համապատասխան,

- արգելվում է մեխանիզմների և սարքավորումների շահագործում տեխնիկական անձնագրերով սահմանված բեռնվածությունների (ճնշում, հոսանքի ուժ, լարում և այլն) գերազանցման դեպքում,

- կտրող սայրերով գործիքների, սարքերի տեղափոխումը պետք է իրականացվի պաշտպանիչ ծածկաշապիկներով,

- աշխատաժամանակի առավելագույն տևողությունը չի գերազանցելու օրական 10 ժամից (հանգստի և սնվելու համար՝ ընդմիջումը ներառյալ),

- աշխատանքները պետք է իրականացվեն ընդհատվող՝ 6-օրյա աշխատանքային շաբաթով,

- աշխատանքային շաբաթը ընդհատվելու է նաև տոնական ու հիշատակի հանգստյան օրերին:

Աշխատակիցները պետք է ապահովված լինեն հանգստի և սննդի ընդունման հարմարավետ տարածքով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրաման
2. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հրապարակումներ
3. Հայաստանի ազգային ատլաս: Հատոր Ա
4. ՀՀ ՇՄՆ «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի պաշտոնական կայքի տվյալներ
5. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
6. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
7. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
8. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
9. “Растительность Армянской ССР”. Магакьян А.К.
10. “Флора, растительность и растительные ресурсы Армении”, Институт ботаники НАН РА Армянское ботаническое общество. Ереван
11. “Дикорастущие съедобные растения Армении”. А.П. Тер-Восканян, Ученые записки Ереванского государственного института.
12. “Цветущие уголки биоразнообразия”, FAO, <http://www.fao.org/3/il687r/il687r08.pdf>
13. “Деревья и кустарники Армении в природе и культуре”. Ж.А. Варданян, 1952
14. Животный мир Армянской ССР. Даль С.К, 1954
15. ՀՀ Սյունիքի մարզաբնակավայրի պաշտոնական կայք
16. Կապան խոշորացված համայնքի պաշտոնական կայք
17. Հարավային ջրավազանային կառավարման տարածքի 2025-2030 թվականների պլանի նախագծի ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվության



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 180-Ա

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թ.

«ԿԱՊԱՆԻ ՃՇՇ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ՍՅՈՒՆԻՔԻ ԱՎԱԶԿՈՊՃԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ԵՐԵՎԱԿՄԱՆ
ՏԱՐԱԾՔՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով
Հայաստանի Հանրապետության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման
և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-
ին մասը, 16-րդ հոդվածի 3-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության
2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման 28-րդ կետը, հաշվի առնելով
հանրային քննարկման 25.11.2024թ. արձանագրությունը և Կապանի համայնքի
ղեկավարի առաջարկությունը, Կապանի համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ նախնական համաձայնություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի
մարզի Սյունիքի ավագակոպնային խստնորդի երևակման տարածքում օգտակար
հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն
իրականացնելու գործունեությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ (21)

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

ԱՆՈՒՇ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

ԳՈՒԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՏՅԱՆ

ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆԺԵԼԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԼԵՆ ԱՐՄԵՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԱՐՏՅՈՒ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՍՈՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԴԻՆՈՒՆՑ
ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ

[Handwritten signatures]

Դեմ (0)
Ձևոնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱՐԱՐ



ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2024թ. Դեկտեմբերի 10
ք. Կապան

**«Կապանի ՃՇՇ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվող «ՀՀ Սյունիքի մարզի
Սյունիքի ավազակոպճային խառնուրդի երևակման տարածքում օգտակար
հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություններ»
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական
հայտի վերաբերյալ հանրային քննարկման
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

25.11.2024թ.

ք. Կապան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի /այսուհետ՝ Հավելված/ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք ՀՀ Սյունիքի մարզի Կապանի մշակույթի կենտրոնում / ՀՀ, Սյունիքի մարզ, Կապան, Չարենց 1 շենք/ 2024 թվականի նոյեմբերի 20-ին, ժամը 12:00-ին տեղի ունեցավ «Կապանի ՃՇՇ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվող «ՀՀ Սյունիքի մարզի Սյունիքի ավազակոպճային խառնուրդի երևակման տարածքում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություններ» աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին «Կապանի ՃՇՇ» ՍՊ ընկերության աշխատակիցը, համայնքի բնակիչներ և Կապանի համայնքապետարանի աշխատակիցներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությունը:

Հանրային քննարկումը վարեց Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ՝ Գոռ Թադևոսյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը:

Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Առավուտ» օրաթերթի 2024 թվականի հոկտեմբերի 19-ի համարում, Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի (www.kapan.am) հայտարարություններ բաժնում:

Համաձայն ՀՀ կառավարության 28.12.2023թ. N2343-Ն որոշման 21-րդ կետի՝ վերը նշված հանրային քննարկման վերաբերյալ Ձեր առաջարկությունները, դիտողությունները

և կարծիքները կարող եք ներկայացնել, ծանուցումից հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում:

Հանրային քննարկման վերաբերյալ դիտողություններ կամ առաջարկություններ մինչ այսօր չեն ստացվել:

Ձեկույցի համար խոսքը փոխանցվեց «Կապանի ՃՀ» ՍՊ ընկերության արտադրատեխնիկական բաժնի ղեկավար Արմեն Սահակյանին:

Ձեկույց (Արմեն Սահակյան) – Շնորհակալություն: Ներկայացնում ենք նախնական ծանուցումը, որի գործունեության նախաձեռնողը՝ «Կապանի ճանապարհների շահագործման և շինարարական» ՍՊԸ-ն է: Նախատեսվող գործունեության անվանումը՝ օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան, նպատակը և համառոտ նկարագիրը:

Մեր ընկերությունը նախատեսում է իրականացնել ՀՀ Սյունիքի մարզի Սյունիքի ավազակոպճային խառնուրդի երևակման տարածքում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ, ինչը համապատասխանում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետին՝ երկրաբանական ուսումնասիրություններ: Երկրաբանական առաջադրանքի կատարման հիմնական մեթոդները և հերթականությունը հետևյալն է՝ կատարել տեղամասի երկրաբանական հանույթ 1:1000 մասշտաբի, երկրաբանահետախուզական աշխատանքներն իրականացնել հետախուզահորերի միջոցով, կատարել ավազակոպճային խառնուրդի հատիկային և միներալային կազմերի, ֆիզիկամեխանիկական ցուցանիշների լաբորատոր ուսումնասիրություններ, կատարել ծավալալիքային զանգվածի լաբորատոր ուսումնասիրություններ և հետազոտություն դաշտային պայմաններում: Ուսումնասիրել ավազակոպճային խառնուրդի որակը ըստ ԳՈՍՏ 8736-14 և ՀՍ ԳՈՍՏ 8267-95 տեխնիկական պահանջների: Ստացված դրական տվյալների հիման վրա կազմել երկրաբանական հաշվետվություն և ՏՏՀ-ի հետ միասին ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: Աշխատանքների համար ընտրված տարածքը վարչական տեսակետից ներառված է Կապան խոշորացված համայնքի՝ Սյունիք բնակավայրի սահմաններում: Հայցվող 2,11 հա տարածքի կոորդինատները ներկայացված է ծանուցման մեջ: Սյունիքի ավազակոպճային խառնուրդի երևակման շրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են յուրային հրաբխածին նստվածքային

ստորին կավճի նստվածքային, վերին չորրորդական ժամանակակից բերվածքային առաջացումները: Նախնական դիտարկման արդյունքներով և ֆոնդային նյութերի ուսումնասիրության տվյալներով Սյունիքի երևակման տարածքը պատկանում է գետաողողատային տիպի հանքավայրերի խմբին և ծագումնաբանորեն կապված է Ողջի գետի ժամանակակից ողողահունային նստվածքների հետ: Հայցվող տարածքի առանձին հատվածներում դիտարկվել է կոպճի, ավազի և դրանց խառնուրդի առանձին նրբաշերտերի հերթափոխում: Երևակման մերձմակերեսային հատվածի առանձին վայրերում նշվել է կոպճի կամ ավազի գերակշռություն: Սակայն, դրանք ունեն փոքր տարածում: Ոսպնյակաձև ծգում են 2-ից 4 մ և աստիճանաբար սեպանում: Ընդհանուր առմամբ երևակում ավազակոպճային առաջացումների նստվածքը համասեռ է: Երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել երկրբանահանության մակերևութային հետախուզական փորվածքների անցման փաստագրման և նմուշակման աշխատանքների համալիրով: Համաձայն ավազի և ավազակոպճային խառնուրդի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգի ըստ երկրաբանական կառուցվածքի բարձրության, Սյունիքի երևակումը համապատասխանում է առաջին երկու խմբի: Այս խմբի հանքավայրերի համար նախատեսված է պաշարների դասակարգում միայն C1 արդյունաբերական կարգով: C1 կարգով պաշարների եզրագծման համար հետախուզական փորվածքների միջև հեռավորությունը կազմում է 100-ից 200մ: Ընդ որում հաշվի՝ առնելով երևակման պարզ երկրաբանական կառուցվածքը, օգտակար հանածոյի մարմնի մորֆոլոգիական ձևը և չափսերը հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել մինչև 4 մ խորությամբ թվով 12 հետախուզահորերի միջոցով: Հետախուզահորերի կտրվածքը ընդունվում է 1,5՝ անգամ 1 մետր: Այդ աշխատանքները կիրականացվեն մեխանիկական եղանակով՝ Hitachi մակնիշի էքսկավատորով V-րդ կարգի ամրության ապարներում: Նախատեսվում է 12 հետախուզահորերի անցում, որոնց առավելագույն խորությունը նախատեսվում է 4 մ, կտրվածքը՝ 1.5մ քառակուսի, ընդհանուր առավելագույն ծավալը՝ 72մ խորանարդ: Հետախուզահորերի անցման ժամանակ առաջանալու է 72 խորանարդ մետր ապարի զանգված, որից 5 խորանարդ մետրը հողաբուսական զանգված է և 67 խորանարդ մետր ավազակոպճային կուտակ: Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր հետախուզահորերը: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:50 մասշտաբով: Այդ աշխատանքների

ծավալը նախատեսվում է 48գծամետր: Օգտակար հանածոյի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է վերցնել նմուշներ հետախուզահորերից, կուտակի լրիվ հզորությամբ 40x40սմ կտրվածքով՝ ակոսային նմուշների միջոցով: Ելնելով ավազներում կոպճային նյութի առկայության հնարավորությունից, մեծ կտրվածքով մեծազանգված նմուշները ապահովում են կուտակի հատիկաչափական կազմի բարձր հավաստիության տվյալների ստացումը: Ակոսային նմուշները նախատեսվում է վերցնել հետախուզական փորվածքների պատից՝ ավազակոպճային կուտակի ամբողջ հզորությամբ: Կախված ավազակոպճային կուտակի հզորությունից ակոսների երկարությունը կարող է տատանվել մինչև 4մ: Հաշվի առնելով ավազակոպճային կուտակի պարզ, գործնականում համասեռ ներքին կառուցվածքը, օգտակար հանածոյի հատիկաչափական կազմի ոչ մեծ փոփոխականությունը և կուտակի հզորությունը, յուրաքանչյուր հետախուզական փորվածքում նմուշարկումը նախատեսվում է իրականացնել կուտակի լրիվ հզորությամբ մեկ միասնական նմուշով: Անհրաժեշտության դեպքում կկիրառվի հատվածամասրով (սեկցիաներով) նմուշարկամ եղանակը: Նմուշարկման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է հետախուզահորերի անցման ժամանակ առաջացած 59մ խորանարդ ծավալով ավազակոպճային կուտակի հետլցնում: Բնապահպանական միջոցառումներից նախատեսվում է իրականացնել՝ մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողի, կենդանական և բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ, բնության հատուկ պահպանվող տարածքների ռեժիմի պահպանություն, ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի ռեկուլտիվացիա, ընդերքօգտագործման և աշխատանքների արդյունքում առաջացող այլ թափոնների կառավարում, ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման մշտադիտարկումներ: Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում համայնքապետարանի հետ համաձայնեցված իրականացվելու են սոցիալական աջակցության ծրագրեր: Կատարվելու է ելակետային պայմանների հավաքագրում: Երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման նպատակով հայցվող տարածքը վարձակալված է «Կապանի ճանապարհների շահագործման և շինարարական» ՍՊ ընկերության կողմից:

Աշխատանքները կատարվելու են Կապան խոշորացված համայնքի Սյունիք բնակավայրի սահմաններում: Հայցվող տարածքը տեղակայված է Ողջի գետի

ծախսափնյա հատվածում: Հիմք ընդունելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և ենթաօրենսդրական ակտերի պահանջները՝ խնդրում եմ «Կապանի ճանապարհների Շահագործման և Շինարարական» ՍՊԸ-ի ՀՀ Սյունիքի մարզի Սյունիքի ավազակոպճային խառնուրդի երևակման տարածքում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման համար տալ համաձայնություն:

Հարց (Գոռ Թադևոսյան) - Ի՞նչ թափոններ են առաջանալու գործունեության ընթացքում:

Պատասխան (Արմեն Սահակյան) - Հիմնական հողային, գրունտի տեսքով:

Հարց (Գոռ Թադևոսյան) - Շինարարական աղբի և գրունտի տեսքով:

Պատասխան (Արմեն Սահակյան) - Այո, շինարարական աղբի տեսքով, եթե այնտեղ աշխատելու է բնական է էքսկավատոր, աշխատանքը կիրականացվի ինչքան հնարավոր է ...

Հարց (Գոռ Թադևոսյան)- Իսկ կենցաղային աղբ:

Պատասխան (Արմեն Սահակյան)- Կենցաղային աղբ այնտեղ դժվար լինի:

Հարց (Անդրանիկ Հովակիմյան)- Նախորդ անգամ հանրային լսումը անցկացվեց դրա հարակից տարածքի համար: Ու փորձաքննության կողմից տրվեց բացասական եզրակացություն: Իմ տեղեկություններով պաշտպանության նախարարության կողմից էր տրվել, որ անվտանգության հետ կապված խնդիրներ կան: Արդյո՞ք այս գործընթացի համար որևէ բան փոխվել է, որովհետև 2022 կամ 2023 թվականին էր նախորդ հանրային քննարկումը: Պաշտպանության նախարարությունը արդյո՞ք նույն կերպ կվարվի:

Պատասխան (Արմեն Սահակյան) - Մենք մինչև այս հանրային լսման համար դիմում ներկայացնելը, այս կոորդինատներով դիմել ենք պաշտպանության նախարարությանը: Ու ստացել ենք իրենց պատասխան գրությունը, որ ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական դիրքորոշումն ստանալու համար, ղեկավարվելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասով անհրաժեշտ է սահմանված կարգով դիմել ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությանը: Իրենք դեմ չեն: Ասում են կարգերով անցեք:

խոսք (Գոռ Թադևոսյան)- Շատ լավ: Ամեն դեպքում կարծում եմ, որ գործունեություն սկսելուց առաջ նույն գերատեսչությունները կտան նաև կարծիք և այդ փուլում նաև այդ հարցերը կքննարկենք: Կա՞ն այլ հարցեր:

Ամփոփում (Գոռ Թադևոսյան)- Քանի որ գործունեությունը իրականացվելու է Կապան համայնքում և Ընդերքօգտագործման մասին օրենքով էլ ընդերքօգտագործողները նաև ունեն թե՛ բնապահպանական և թե՛ սոցիալ-տնտեսական պարտավորություններ, ուստի, որպես պահանջ համայնքի կողմից նախատեսված տվյալ գործունեությունն իրականացնելու պարագայում, արդյունահանում իրականացնելու պարագայում, որպես սոցիալ-տնտեսական ծրագրի իրականացման նպատակով՝ նախատեսված տարեկան 10 մլն ՀՀ դրամի չափով աջակցություն համայնքին: Սա որպես համայնքի կողմից պահանջ և իհարկե, մյուս բնապահպանական խնդիրների լուծումները տալ գործող օրենսդրական կարգավորումներով: Այդ թվում նաև՝ թափոնների կառավարումը և, եթե անհրաժեշտություն լինի, ապա կնքել պայմանագրեր՝ համապատասխան կառույցների հետ աղբահանություն իրականացնելու համար: Կա՞ն այլ հարցեր: Եթե չկան այլ հարցեր, շնորհակալություն եմ հայտնում բոլորիդ հանրային լսմանը մասնակցելու համար: Շնորհակալություն:

Հանրային քննարկման վարող՝

Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ



Գոռ Թադևոսյան

Նախաձեռնող՝

«Կապանի ՃՇՇ» ՍՊԸ տնօրեն



Արարատ Կարապետյան